Գիտություն

ՀՈԿՏԵՄԲԵՐ
№ 10
(227)
2010 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Հայաստանի հարավում բնության գողտրիկ անկյունում գտնվող 9-րդ դարի Տաթևի վանական համալիրը հավերժական իր երթում պատրաստ է 21 դարի մեծ թռիչքին. աշխարհում ամենաերկար՝ «Տաթևի թևեր» երկկողմանի ճոպանուղին արդեն իրականություն է: 5,7 կմ երկարությամբ ճոպանուղին 30 շինարարի 11 ամիսների աշխատանքի արդյունք է. այն ձգվում է Որոտանի գեղատեսիլ կիրճի վրայով՝ 11 րոպեում կապելով Հալիձոր և Տաթև գյուղերի կայանները ճիշտ այնպես, ինչպես «Տաթևի վերածնունդ» ծրագիրն է կամրջում անցյալի փառահեղ ժառանգությունն ապագայի հետ:





ՀՀ նախագահի հրամանագրով

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 19-րդ տարեդարձի առթիվ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Սուրենի Արևշատյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» Առաջին աստիճանի մեդալով:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 19-րդ տարեդարձի առթիվ, գիտության զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհվել՝

Լենսեր Աբգարի ԱՂԱԼՈՎՅԱՆԻՆ - ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի խորհրդական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Արմեն Անուշավանի ԳԱԼՈՅԱՆԻՆ - ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Գրիգորի Ալեքսանդրի ՂԱՐԻԲՅԱՆԻՆ - Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

ՀՀ ԳԱԱ ոսկե մեդալ շնորհվեց միջազգային գիտատեխնիկական կենտրոնի գործադիր տնօրեն Ադրիաան Վան Դեր Մեերին

Հայաստանում գիտության զարգացմանն աջակցելու համար Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի գործադիր տնօրեն Ադրիաան Վան դեր Մեերը պարգևատրվեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ոսկե մեդալով: Մեդալի հանձնման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ հոկտեմբերի 5-ին:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ ղեկավարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, գիտության պետական կոմիտեի ղեկավար Սամվել Հարությունյանը, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի կողմից ֆինանսավորվող գիտական նախագծերի ղեկավարներ, գիտական հասարակայնության ներկայացուցիչներ:

Նշենք, որ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը միջկառավարական կազմակերպություն է, որը հիմնադրել են Եվրամիությունը, Ճապոնիան, Ռուսաստանի Դաշնությունը և ԱՄՆ-ը: Ներկայումս Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը ֆինանսավորվում է Նորվեգիայի, Կորեայի Հանրապետության և Կանադայի կողմից:

ՀՀ ԳԱԱ-ՈՒՄ ՍՏԵՂԾՎԵՑ «ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ-Ը

«Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի և ՀՀ ԳԱԱ «Միկրոբիոլոգիայի և մանրէների ավանդադրման կենտրոն» ՊՈԱԿ-ի միաձուլմամբ ՀՀ ԳԱԱ-ում ստեղծվեց ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՄՈՄԻԿ -750

Միջնադարի հայ հանճարեղ ճարտարապետ, քանդակագործ, մանրանկարիչ և գրիչ Մոմիկի ծննդյան 750-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքում 2010 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտաժողով, որի աշխատանքների ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի և ԵՊՀ գիտնականների ութ զեկուցումներում և մեկ հաղորդման մեջ ներկայացվեց արվեստագետի բազմանիստ գործունեությունն՝ իր բոլոր բնագավառներով:

Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը նշեց, որ Մոմիկի մասին առկա գրականությունը թերթելիս նկատել է, որ հետազոտողներից ոչ ոք Մոմիկին չի համեմատել իտալական Վերածննդի «կնքահայր», հանճարեղ արվեստագետ Ջոտտոյի հետ: Մինչդեռ Ջոտտոն ևս ծնվել է 13-րդ դարի 60-ականներին (1266-1337) և Մոմիկի պես մահացել 14-րդ դարի 30-ականներին: «Կնշանակի, որ Ջոտտոն և Մոմիկը ոչ միայն ժամանակակիցներ էին, այլև՝ հասակակիցներ: Ավելին: Ինչպես Ջոտտոն իտալական արվեստում, այնպես էլ Մոմիկը հայկական միջնադարյան արվեստում իր ժամանակից առաջ ընկած, նորարար, արվեստում նոր ուղիներ հարթող ունիվերսալ վարպետ էր: Այդ իմաստով Մոմիկին կարելի է անվանել «հայկական Ջոտտո»»:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը կարևորեց գիտական սեսիայի անցկացումը և նկատեց, որ թեև 10-14-րդ դարերի հայ մշակույթը միջնադարի գագաթնակետն է, երբ մեծ վերելք ապրեցին գիտությունն ու արվեստը, սակայն մինչ օրս այն ներկայացված չէ եվրոպական մշակույթի ֆոնի վրա: «Անհրաժեշտ է ուսումնասիրել 12-14դդ. հայ գիտության և արվեստի առանձին գործիչների ստեղծագործությունները, ցույց տալ, որ Հայաստանում այդ դարերում նախավերածնության շրջան էր, ընդհանրացված ներկայացնել այդ դարերի մշակույթը և օտար լեզվով ներկայացնել հանրությանը»:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց նաև Մոմիկի ծննդյան 750-ամյակին նվիրված հոբելյանական կառավարական հանձնաժողովի անդամ, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը:

Գիտաժողովում առաջինը հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանը՝ «Մոմիկը որպես ճարտարապետ» թեմայով զեկուցումով: Բանախոսը նշեց, որ նկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Մոմիկը բացառիկ երևույթ էր միջնադարի հայ (և ոչ միայն հայ) արվեստում: Նրա ճարտարապետական ստեղծագործությունները արվեստների սինթեզի գլուխգործոցներ են, որոնց նշանակությունն անվիճելիորեն դուրս է գալիս ազգային մշակույթի շրջանակներից: «Նրա կերտած Արենիի Ա.Աստվածածին եկեղեցին երկմույթ գմբեթավոր եկեղեցու լավագույն օրինակն է, իսկ Նորավանքի Բուրթելաշեն երկհարկ, եռայարուս եկեղեցին՝ նոր խոսք համաքրիստոնեական պաշտամունքային ճարտարապետության մեջ»:

Մոմիկի խաչքարերի ուսումնասիրությանն էր նվիրված ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյանի բանախոսությունը: Ըստ զեկուցողի՝ Մոմիկի խաչքարերի բնութագիրը նույնական է դասական խաչքարերի բնութագրին: «Ճարտարապետը, քանդակա- ➤3



Լրացավ ականավոր մաթեմատիկոս, Նորթիստերն համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Արշակ Հաճյանի ծննդյան 80-ամյակը:

Հայաստանի գիտական հասարակայնությունը, ՀՀ ԳԱԱ նախագահությունը ջերմորեն և սրտանց շնորհավորում են Արշակ Հաճյանին՝ ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ, ցանկանում քաջ առողջություն ու երջանկություն՝ իր հարազատների ու մտերիմների հետ միասին:

ԱԿԱՆԱՎՈՐ ԱՐԱԲԱԳԵՏԸ

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակի առթիվ



Բոլորեց ականավոր գիտնական, արևելագետ, արաբագետ և միջազգայնագետ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակը: Նա հայ արևելագիտության հիմնադիրներից և հիմնասյուներից մեկն է, միջազգային մեծ հեղինակություն վայելող ինքնատիպ գիտնական-հետազոտող, որի աշխատությունները ծանրակշիռ ներդրում են ոչ միայն հայ արևելագիտության, այլև ընդհանրապես ժամանակակից արևելագիտության բնագավառում:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի գիտական գործունեությունը կես դարից ավելի սերտորեն կապված է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հետ, որի բազմամյա տնօրենն է եղել: Բացառիկ է նրա դերակատարումը հայ արևելագիտության գիտահետազոտական ուղղությունների ձևավորման և զարգացման գործում: Նա արաբագիտության հայկական դպրոցի հիմնադիրն է:

Լայն է պրոֆ. Ն Հովհաննիսյանի գիտական ուսումնասիրությունների տեսադաշտը: Արաբական երկրների պատմության, մերձավորարևելյան տարածաշրջանային, արտաքին քաղաքականության, գաղափարախոսության, քաղաքական իսլամի, հայ-արաբական, այդ թվում և միջպետական հարաբերությունների, բախումնաբանության, ցեղասպանագիտության հիմնախնդիրների ուսումնասիրություն, ահա նրա գիտական հետաքրքրությունների ոլորտը: Այդ հիմնախնդիրներին նվիրված նրա ուսումնասիրությունների թվաքանակն անցնում է 450-ից, այդ թվում և տասնյակ մենագրական ուսումնասիրություններ: Նրա աշխատությունները հրատարակվել են բազմաթիվ եվրոպական, ամերիկյան և ասիական երկրներում՝ աշխարհի տարբեր լեզուներով: Երկար ժամանակ նրա գիտական հետազոտությունների կենտրոնում է եղել ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությունը, որ ամփոփված է նրա հրատարակած յոթ հատորներում:

Ն. Հովհաննիսյանի արաբագիտական ուսումնասիրությունների թագն ու պսակը կազմում է նրա «Արաբական երկրների պատմություն (VII դ- 2005 թ.)» քառահատոր կոթողային աշխատությունը, որն արժանացել է Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակին: Բարձր գնահատականի է արժանի նաև Ն. Հովհաննիսյանի 1998 թ. անգլերեն լեզվով հրատարակված «Հայաստանի արտաքին քաղաքականությունը» մենագրությունը: Դա անկախ Հայաստանի արտաքին քաղաքականությանը նվիրված առաջին մասնագիտական հետազոտությունն էր, որտեղ լուսաբանվել են Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնադրույթները, Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, արաբական երկրների, Ադրբեջանի, Վրաստանի և Իսրայելի հետ:

Մեծ է Ն. Հովհաննիսյանի վաստակը Հայոց ցեղասպանության պատմագիտական և քաղաքագիտական հետազոտության ոլորտում: Նա վերջերս ընթերցողի սեղանին դրեց բացառիկ նշանակություն ունեցող իր երկու նոր ինքնատիպ մենագրությունները՝ «Հայոց ցեղասպանություն: Հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն. աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, թուրքերեն, ճապոներեն, հունգարերեն, հայերեն, արաբերեն և պարսկերեն», և «Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է»:

Ն. Հովհաննիսյանն իր կարևոր ներդրումն է բերել նաև արցախյան հիմնախնդրի գիտական ուսումնասիրության և լուծման ուղիների որոնումներում: Դրան նվիրված նրա մենագրական աշխատությունները հրատարակվել են Երևանում, ԱՄՆ-ում, Իտալիայում և Եգիպտոսում: Խոսքը հատկապես նրա «Ղարաբաղյան հիմնախնդիրը. Ազատության և անկախության փշե ճանապարհը» աշխատության մասին է:

Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանին բնորոշ են նոր տեսադրույթների առաջքաշումը և հիմնավորումը: Նա 1982 թ. Համբուրգում գումարված Արևելագետների համաշխարհային XXXII կոնգրեսին ներկայացրեց արաբական երկրների անհամաչափ զարգացման իր նոր տեսադրույթը, որն արժանացավ մասնակիցների հավանությանը: Նա հեղինակն է միջարաբական հարաբերությունները միջազգային հարաբերությունների նոր տեսակ լինելու տեսադրույթի: Իսլամագետների միջազգային կոնֆերանսին նա ներկայացրեց «Իսլամի քաղաքականացման և քաղաքականության իսլամացման» իր բանաձևը, որը դարձավ գիտաժողովում քննարկված կենտրոնական հարցերից մեկը: Նա կողմնակիցն է այն տեսակետի, որ միջազգային հարաբերությունների կենտրոնը Եվրոպայից աստիճանաբար տեղափոխվում է Արևելք:

Ն. Հովհաննիսյանին, որն իր աշխատությունների շնորհիվ հայտնվել է միջազգային ճանաչում ունեցող մասնագետների առաջին շարքերում, արտասահմանյան գիտական կենտրոնները հաճախ են համատեղ աշխատանքի հրավիրում: Նրա անմիջական մասնակցությամբ 2007 թ. Կահիրեի համալսարանում բացվեց Հայագիտական հետազոտությունների կենտրոն: Բրիտանական ակադեմիայի հրավերով 1989 թ. գիտահետազոտական աշխատանքներ է իրականացրել Լոնդոնի և Օքսֆորդի համալսարաններում, շահելով Ֆուլբրայթի մրցանակ, 1993-1994 թթ. աշխատել է Ջորջ Վաշինգտոնի համալսարանում, իսկ 1995 թ.՝ Մերիլենդի համալսարանում և այլն:

Մեծ է Ն. Հովհաննիսյանի վաստակը հայ.արևելագետների նոր սերնդի աճեցման և ձևավորման գործում: Նա եղել է մոտ 50 գիտաշխատողների գիտական ղեկավար:

Հայաստանի և Եգիպտոսի միջև միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդամ է, Հայ-ատլանտյան ասոցիացիայի պրեզիդենտ և այլն: Նիկոլայ Հովհաննիսյանը Փարիզի, Նյու Յորքի, Մոսկվայի, Գերմանիայի, Սիրիայի և այլ ակադեմիաների ու գիտական ընկերությունների անդամ է: Պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ նախագահության գովեստագրով, «Բարեկամության բնագավառում ներդրումի համար» Պատվո նշանով, Մովսես Խորենացու մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալով, «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեզօծ մեդալով և այլն:

ՀՀ ԳԱԱ նախագահության և հայագիտության ու հասարակակաին գիտությունների բաժանմունքի անունից սրտանց շնորհավորում ենք Ձեզ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, ցանկանում արևշատություն և հետագա գիտական բեղմնավոր գործունեություն:

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս
Վ. Բ. ԲԱԲԽՈՒԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

Նշվեց ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի 50-ամյա հոբելյանը

ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը իր գոյության 50 տարիների ընթացքում կարողացել է այնպես աշխատել, որ վստահաբար ասենք՝ այս ոլորտն իր զարգացածությամբ միջազգային ինստիտուտներից հետ չէր մնում: Ինստիտուտի աշխատանքները ամփոփվեց հիմնադրման 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ:

Նիստին ներկա էր ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ով պատվոգրեր հանձնեց ինստիտուտի առաջատար գիտնականներին:

Նիստի ժամանակ հյուրերը մտովի տեղափոխվեցին 1980-ական թվականներ՝ ռադիոֆիզիկայի ինստիտուտի աստղային տարիներ, երբ ինստիտուտի հետազոտությունները Խորհրդային Միությունում մեծ հռչակ էին վայելում.

- Ցավոք, դրան հաջորդեց անկման ժամանակաշրջանը՝ 1990-ական թթ.: Այդ տարիներին անձնակազմի և նյութատեխնիկական բազայի ոլորտում զգալի կորուստներ ունեցանք,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, 1980-2006 թթ. ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն Ռադիկ Մարտիրոսյանը՝ ընդգծելով իր հպարտությունը, որ այդ կառույցի մասնագետների 50 տարիների ընթացքում կատարած հայտնագործությունները փորձում են կիրառել այլ ոլորտներում, մասնավորապես՝ բժշկության մեջ:

ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը հիմնադրվել է 1960 թ. Բյուրականի աստղադիտարանի ռադիոաստղագիտության բաժնի հիման վրա՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի նախաձեռնությամբ:

Ինստիտուտում կարևոր ուսումնասիրություններ են կատարվել քվանտային ռադիոֆիզիկայի ուղղությամբ: Ուսումնասիրվել են ակտիվ նյութեր քվանտային ուժեղարարների համար: Միլիմետրային ալիքի երկարության վրա զմրուխտի արհեստական բյուրեղներն առաջարկվել են որպես ակտիվ նյութ: 1,35 սմ ալիքի երկարության վրա ստեղծվել է քվանտային լայնաշերտ ուժեղացուցիչ, որը կիրառվել է ռադիոաստղագիտական դիտումներում: Հայտնաբերվել և ուսումնասիրվել է միլիմետրային ալիքների գեներացիան և հաճախության փոխակերպումը բարձրաստիճան գերհաղորդչային Ջոզեֆսոնյան կառուցվածքներում: Մշակվել և ստեղծվել են ԳԲՀ ռադիոմետրեր, որոնք մեծ հաջողությամբ կիրառվել են «Միր» տիեզերական կայանի և «Օկեան-0» ու «Պրիրոդա» ծրագրերով աշխատող արբանյակի վրա Երկրի և մթնոլորտի հեռադիտման համար: Ստեղծվել է անկյան ճշգրիտ փոխակերպիչների մի շարք, որոնք օգտագործվել են «Միր» արբանյակային կայանում և ինքնաթիռներում սարքերի տարածային կողմնորոշման համար: Մշակվել են ավտոմատ համակարգեր՝ փակ տարածքների պահպանման համար: Մշակվել է միլիմետրային տիրույթի հաղորդիչ-ընդունիչ համակարգ՝ փակ տարածքային ներքին կապի, ինչպես նաև լոկալ ինտերնետ-կապի համար: Ստեղծվել է «Արցախ» բժշկական սարքավորումը՝ ակուպունկտուրային մեթոդներով միլիմետրային ալիքների ազդեցությամբ որոշ հիվանդությունների բուժման համար: Ուսումնասիրվել է լույսի ազդեցությունը ալմաստի բյուրեղների պլաստիկության վրա: Հետազոտվել է ալմաստի փոշուց պատրաստված տակդիրներով բարձր հաճախության տրանզիստորների մշակման հնարավորությունը: Ստեղծվել է ժամանակից կախված Գինզբուրգ-Լանդաու հավասարումների տեսությունը: Հայտնաբերվել և ֆիզիկորեն բացատրվել է ֆոտոզգայունության բնութագրի նշանի փոփոխությունը կիսահաղորդիչներում: Աճեցվել և ուսումնասիրվել են $Pb_{1-x}Sn_xTe$ առանձին բյուրեղներ, որոնք կարող են օգտագործվել որպես ինֆրակարմիր և միլիմետրային տիրույթի ալիքների ղեկտեկտորներ: Ստացվել են նոր օքսիդային կերամիկական նյութեր, որոնց բարձր ջերմաէլեկտրական էֆեկտիվությունը հեռանկարներ է ստեղծում դրանց օգտագործմանը Պելտյեի սառեցուցիչներում:

Վերջին 10 տարիներին ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում կատարվել են 5 աշխատանքներ ՀՀ ռազմաարդյունաբերության կարիքների համար, ինչպես նաև 7 պայմանագրային աշխատանքներ արտասահմանյան գիտաարդյունաբերական կենտրոնների պատվերներով՝ նոր ռադիոֆիզիկական սարքերի ստեղծման ուղղությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Հայկական քիմիական ընկերության 2-րդ գիտաժողովը՝ նոր նյութեր և պրոցեսներ

Հոկտեմբերի 4–ից Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում մեկնարկեց Հայկական քիմիական ընկերության 2-րդ գիտաժողովը՝ «Նոր նյութեր և պրոցեսներ» խորագրով: Գիտաժողովի ընթացքում քննարկվեցին հանրապետության հանքային հումքի, ինչպես նաև բնական ածխաջրածնային և նավթանյութերի հումքի հիման վրա նոր նյութերի և միացությունների ստեղծման վերաբերյալ գիտական հետազոտությունների արդյունքները: Քննարկվեցին արդյունաբերական նշանակության միացությունների ու նյութերի ստացման և արտադրական պրոցեսների արդյունավետ իրականացման նոր մոտեցումներ:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին հանրապետության քիմիական պրոֆիլի բոլոր գիտական, ուսումնական և արտադրական կազմակերպությունները՝ «Նաիրիտ գործարան» գիտահետազոտական կենտրոնը, նախկին «Պոլիմեր» ՀԳՀԻ պոլիմերային նյութերի ինստիտուտը, «Պլաստպոլիմեր» գիտաարտադրական միավորումը, Վանաձորի քիմիական կոմբինատը, Վանաձորի պետական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Գորիսի պետական համալսարանը, Արարատի ցեմենտի գործարանը և այլ կազմակերպություններ, ինչպես նաև Արցախի, Ռուսաստանի և Բելառուսի գիտնականները:

Բացելով գիտաժողովը ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ «նյութերի և պրոցեսների» ուսումնասիրությունը Հայաստանում կարող է դառնալ տնտեսական զարգացման լուրջ հիմք: «Տարբեր ոլորտներում մեր գիտական հայտնագործությունները պատրաստ են ներդրման համար, բայց չկան այն փոքր ֆինանսական խթանները, որոնք անհրաժեշտ են դրանք գործարկելու համար», - ասաց ԳԱԱ նախագահը: Նրա խոսքով՝ «Քիմիական ընկերության» առաջնային խնդիրներից մեկը պետք է լինի գիտական տարբեր հաստատությունների և տնտեսվարողների միջև կապեր հաստատելը: Այս հանդիպումն արդեն առավել որոշակի է դարձնում տարբեր միջոցներով նոր նյութեր ստանալու անհրաժեշտությունը:

Գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մանթաշյանը հույս հայտնեց, որ լուրջ մրցակցության արդյունքում ամենակենսունակ ծրագրերը կարժանանան ֆինանսավորման:

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Արշակ Հաճյան



Արշակ Հաճյանը ծնվել է 1930 թ. հոկտեմբերի 21-ին Կահիրեում: Ծնողները Արևմտյան Հայաստանից էին՝ Յողոնոլուկ գյուղից: Արշակ Հաճյանի հայրը այն խիզախ հայորդիներից էր, ով մասնակցել է Մուսա լեռան հերոսական կռիվներին և հետո՝ հպարտ ու անպարտ՝ ֆրանսիական նավով հեռացել է՝ հանգրվան գտնելով Պորտ Սաիդում՝ Եգիպտոսում: Եգիպտոսում Արշակ Հաճյանը հաճախել է Կահիրեի Գալուստեան ազգային վարժարան, Հուսափեր սրահում մասնակցել հայկական մշակութային հավաքներին: Եղբոր՝ Վահանի հետ 18 տարեկան հասակում նա մեկնում է Միացյալ Նահանգներ: Հարկադրված աշխատում էին պողպատածուլարանում, որպեսզի վճարեն կրթության ծախսերը և օգնեն ծնողներին: Հատկանշական է, որ Հաճյանը մինչև Չիկագոյի համալսարան ընդունվելը չուներ ոչ ավագ դպրոցի և ոչ էլ քոլեջի կրթություն: Իսկ Չիկագոյի համալսարանն ուներ միայն մագիստրատուրա: Այսպիսով, չունենալով որևէ դիպլոմ, Հաճյանը կարողացավ ընդունվել Չիկագոյի համալսարանի մագիստրատուրա:

Սկզբում նրա նախասիրությունը ֆիզիկան էր, սակայն այն պահանջում էր շարունակական լաբորատոր փորձարկումներ, իսկ երիտասարդ Հաճյանը սովորելուն զուգահեռ աշխատում էր պողպատածուլարանում: Կարիքից դրդված ապագա մեծանուն գիտնականը վճռեց զբաղվել մաթեմատիկայով, որն էլ բախտորոշ դարձավ նրա համար:

Արշակ Հաճյանը 1954թ. ավարտեց Չիկագոյի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը, խորամուխ եղավ մասնագիտության մեջ, և 1957թ. Ելի համալսարանում պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը:

Հատկանշական է, որ 1950-ականների վերջին և 60-ականների սկզբներին Միացյալ Նահանգներում սկսեցին մեծ ուշադրություն դարձնել մաթեմատիկայի զարգացմանը, ինչն էլ համընկավ Հաճյանի ուսանելու տարիների հետ:

Դոկտորականը պաշտպանելուց հետո ամերիկյան մի շարք բարձրակարգ համալսարաններ (Ռոչեստեր, Ելը, Քոռնել) հրավիրեցին Արշակ Հաճյանին իրենց մոտ դասավանդելու:

Պրոֆեսոր Հաճյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է ֆունկցիոնալ անալիզի, հավանականությունների տեսության, վիճակագրական ֆիզիկայի և թվերի տեսության բնագավառները:

1960-ական թթ. նա հրավիրվեց Բոստոնի Նոթիստերն համալսարան՝ հիմք դնելու մաթեմատիկայի հետազոտությունների բաժնին:

1964թ. Ս.Կակուտանիի հետ համատեղ աշխատանքում ներմուծեց «թույլ մոլորվող բազմությունների» (weakly wandering sets) հիմնարար գաղափարը, որը հնարավորություն տվեց լուծելու վերջավոր կամ վերջավոր չափին համարժեք՝ տրված չափելի արտապատկերման նկատմամբ ինվարիանտ չափի գոյության դասական խնդիրը: Ա. Հաճյանն ապացուցեց, որ ցանկացած արտապատկերում թույլ է տալիս համարժեք ինվարիանտ չափի ներմուծում այն, և միայն այն դեպքում, երբ գոյություն չունի դրական չափի «թույլ մոլորվող բազմություն»:

Շարունակելով հետազոտությունները նշված բնագավառում Ա. Հաճյանն առաջինն էր, որ դիտարկեց «ինվարիանտ չափերի ներմուծման խնդիրը» անվերջ չափ ունեցող տարածությունների համար: Մեծանուն գիտնականին առաջին անգամ հաջողվեց էրգոդիկ տեսությունը կիրառել թվերի տեսության մեջ, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց մաթեմատիկոսների շրջանում: Այսօր Հաճյանն աշխարհում ճանաչված մասնագետ է էրգոդիկ տեսության բնագավառում, որը մաթեմատիկայի կարևոր դասական ուղղություններից մեկն է: Նա հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների՝ տպագրված ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Իսրայելի առաջնակարգ գիտական ամսագրերում: Ընդ որում, դրանց մի մասը կատարվել են հռչակավոր մաթեմատիկոսներ Ս.Կակուտանիի և Յու. Իտոյի հետ համատեղ: Այժմ նա ԱՄՆ-ի խոշորագույն կենտրոններից մեկի՝ Նորթիսթերն համալսարանի պրոֆեսոր է:

Օտար հողում արարելուն զուգընթաց Հաճյանը երբեք չի մոռացել իր պատմական հայրենիքի մասին և իր ճշմարիտ ավանդն է ունեցել հայկական մաթեմատիկայի զարգացման մեջ: Վերջին 30 տարիների ընթացքում նա սերտ կապեր է պահպանում Հայաստանի մաթեմատիկոսների հետ, դասախոսություններով հանդես գալիս Երևանի պետական համալսարանում և ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտում: Մի հանգամանք, որ մեծապես նպաստել է երիտասարդ մատեմատիկոսների գիտական հետաքրքրությունների ընդլայնմանը: Հայաստանում մաթեմատիկայի պահպանման և զարգացման համար էական նշանակություն ունեցավ Հաճյանի նախաձեռնությամբ և վճռական օժանդակությամբ ստեղծված «Հիմնարար մաթեմատիկա» հիմնադրամը Հայաստանում, որն արդեն բազում տարիներ նպաստում է շնորհալի երիտասարդ հայ մաթեմատիկոսների նյութական խրախուսմանը, Հայկական մաթեմատիկական միության գործունեությանը, Հայաստանում միջազգային մաթեմատիկական գիտաժողովների, սեմինարների, հոբելյանական միջոցառումների կազմակերպմանը, գիտական հետազոտությունների նյութատեխնիկական բազայի ապահովման, հրատարակման և այլ հարցերում:

Արշակ Հաճյանն ունի 3 զավակ, որոնցից երկուսը՝ Արսեն և Արամ Հաճյանները, շարունակում են իրենց հոր ընտրած ուղին: Ավագ որդին՝ Արսենը, դասավանդում է Վոթերլու համալարանում, միաժամանակ հետազոտություններ իրականացնում աստղաֆիզիկայի ոլորտում: Նա պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Երվանդ Թերզյանի ղեկավարությամբ: Կրտսեր որդին՝ Արամը, ավարտելով Ստանֆորդը և Հարվարդը, մասնագիտացել է բիոմեխանիկայի ոլորտում: Պաշտպանելով դոկտորական ատենախոսությունը, Արամ Հաճյանը արդեն 10 տարուց ավելի է աշխատում է Հայաստանում: Այսօր նա Հայաստանում ամերիկյան համալսարանի ինժեներիայի բաժնի դեկանն է:

Հաշվի առնելով Հաճյանի գիտական մեծ նվաճումները, ինչպես նաև Հայաստանի գիտական մտքի զարգացման գործում ունեցած մեծ ներդրումները, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան Արշակ Հաճյանին ընտրեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ, ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտաշխատող

ՄՈՄԻԿ-750

➢1 գործն ու մանրանկարիչը հավասարաչափ արտահայտվել են այս կոթողներում՝ սլացիկ սալ, մանրամասն, ճկուն, չընդհատվող քանդակ, մարդաբանական ճշտության հասնող պատկերաքանդակ: Մոմիկի խաչքարերի էական նվաճումներից են ցացկեն կամ աժուր բլթակները, որոնք առկա են միայն Պողոսի ու Դադիվանքի հայտնի խաչքարերում»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Քերթմենջյանի զեկուցումը նվիրված էր Աղթամարի Ս.Խաչ տաճարի, Բուրթելաշենի և Նորավանքի հորինվածքների համեմատական քննությանը: Բանախոսը մեկնաբանեց հուշարձանների կառուցման շարժառիթները և վերլուծեց դրանց պատկերային համակարգերն ու հորինվածքային կառուցվածքը: «Երկու տաճարներն էլ, որոնք ստեղծագործական որոնումներ են, նոր երանգ ավելացրեցին հայկական ճարտարապետության և համաշխարհային միջնադարի հարստություններին: Քանդակային պատկերագրությամբ Բուրթելաշենի դեպքում աղոթք է բարձրացված առ Աստված, իսկ Աղթամարի դեպքում փառաբանվում է Արծրունու թագավորության բարօրությունը՝ Աստծո բարեհաճությամբ»:

Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Լիլիթ Զաքարյանը ներկայացրեց Մոմիկի մանրանկարչական ժառանգությունը՝ պահպանված մաշտոցյան Մատենադարանի երկու ձեռագրերում:

Նստաշրջանի առաջին նիստը եզրափակեց Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի Հայ արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Կարեն Մաթևոսյանի հաղորդումը Մոմիկին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում օրերս հրատարակված՝ իր իսկ հեղինակած «Մոմիկ» գրքի (հայերեն, անգլերեն) և «Մոմիկ մանրանկարիչ (13-14-րդ դդ.)» ալբոմ-ուսումնասիրության (կազմողներ՝ Կարեն Մաթևոսյան, Լիլիթ Զաքարյան, խմբագիր՝ Հրաչյա Թամրազյան) մասին:

Նստաշրջանի երկրորդ նիստն սկսվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Ռուսական արվեստի թանգարանի (Արա Աբրահամյանի հավաքածու) տնօրեն, ճարտարապետության թեկնածու Անուշ Տեր-Մինասյանի «Արվեստների համադրումը (սինթեզը) Մոմիկի ստեղծագործություններում» բանախոսությամբ: Զեկուցողի տեսակետի համաձայն՝ «Տարբեր արվեստներին լիակատար տիրապետող Մոմիկին հաջողվել է օրգանապես միավորել դրանք մեկ գեղարվեստական բարձրարվեստ ստեղծագործության մեջ՝ որ ասպարեզին էլ այն պատկաներ: Դրա շնորհիվ նրա գործերը, բազմակողմանի ընկալվելով, մարդու վրա թողնում են ամբողջական էմոցիոնալ ներգործություն»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Սեյրանուշ Մանուկյանի «Անվանաթերթերը Մոմիկի ծաղկած ձեռագրերում» զեկուցումը նվիրված էր Մոմիկի՝ Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող երկու՝ 1292թ. և 1302թ. Ավետարանների անվանաթերթերին, «որոնք իրենց հորինվածքով, զարդամոտիվներով, զարդատառերով և լուսանցազարդերով արտացոլում են Գլաձորի դպրոցի մանրանկարչության զարգացման վաղ և միջին փուլերը՝ կապված համապատասխանաբար Մեծ Հայքի և Կիլիկյան ու բյուզանդական ավանդույթների ներթափանցման հետ»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Զեփյուռ Թառայանն անդրադարձավ Հայր Աստծո կերպարին Նորավանքում:

ԵՊՀ դասախոս, արվեստագիտության թեկնածու Զարուհի Հակոբյանի զեկուցումը նվիրված էր 13-րդ դարի երկրորդ կեսին և 14-րդ դարի առաջին կեսին վայոցձորյան քանդակի բյուզանդական պատկերագրական անդրադարձներին:

Եզրափակիչ խոսքում Արարատ Աղասյանը կարևորեց գիտաժողովի զեկուցումների ժողովածուի լույս ընծայումը, ինչը հասու կլինի լայն հանրությանը, կընդլայնի մեր պատկերացումները Մոմիկի արվեստի մասին, կնպաստի Մոմիկի արվեստի ճանաչմանը և տարածմանը:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր

ԱՆՎԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Գրիգորյանի ծննդյան 80-ամյակի առթիվ

Լրացավ անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ Արամ Պարույրի Գրիգորյանի ծննդյան 80-ամյակը:

Ա. Գրիգորյանը ծնվել է 1930 թ. սեպտեմբերի 28-ին Թիֆլիսում: 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Գիտաաշխատանքային գործունեությունը սկսել է 1953 թ.՝ որպես ՀԿԿ «Կոմունիստ» ռուսերեն պաշտոնաթերթի գրականության և արվեստի բաժնի աշխատակից: 1958 թ. առ այսօր Արամ Գրիգորյանն աշխատում է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, նախ՝ որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող, տնօրենի տեղակալ: Այժմ գրականության տեսության բաժնի վարիչն է:



Իրեն բնորոշ գիտահասարակական գործունեությամբ այս անցնող տասնամյակների ընթացքում նա գրականության ինստիտուտում աշխատելուն զուգընթաց եղել է նաև Հայաստանի գրողների միության քարտուղար, ՀԳՄ «Литературная Армения» ամսագրի խմբագիր, իսկ 2003 թ. սկզբից նրա գործունեությունը սերտորեն կապվում է նաև ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հետ, որտեղ ռուսաց լեզվի ու գրականության և մշակույթի իր հարուստ գիտելիքներն է փոխանցում այդ բնագավառների ապագա մասնագետներին ու մանկավարժներին:

Ա. Գրիգորյանի գրչին են պատկանում «Եղիշե Չարենց» (Մոսկվա, 1959), «Եղիշե Չարենցի պոեզիան» (Երևան, 1961), «Գեղարվեստական ոճի հիմնահարցերը» (Երևան, 1966), «Գեղարվեստական ոճի և պատկերի կառուցվածքը» (Երևան, 1974թ.), «Գրականությունը և տեսությունը» (Երևան, 1976), «Քննադատությունը և գրական ընթացքը» (Երևան, 1979), «Գրական երկի կառուցվածքի վերլուծությունը» (Երևան, 1984), «Ոճային որոնումները և գրական զարգացումը» (Երևան, 1987), «Գրական ստեղծագործության ամբողջականությունը» (Երևան, 2004) մենագրությունները: Նրա ավելի քան հարյուր հոդվածներ լույս են տեսել գիտական և գրական տարբեր պարբերականներում, այդ թվում նաև մոսկովյան այնպիսի հեղինակավոր հրատարակություններում, ինչպիսիք են «Вопросы литературы:, «Дружба народов:, «Литературная газета:, «Советская культура»: Առանձին մի խումբ են կազմում մոսկովյան ակադեմիական տարբեր հատորյակներում տպագրվածները, այդ թվում՝ «Խորհրդային բազմազգ գրականության պատմության» յոթհատորյակում, «Միասնություն», «ԽՍՀՄ գրողների համագումարները» և «Հայ գրականության պատմություն» հատորյակներում:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի նրա գլխավորած բաժինը արդեն երկար տարիներ զբաղվում է նաև գրականագիտական տարբեր հասկացությունների և հիմնահարցերի հայ գրականությունում ունեցած անդրադարձի քննությամբ: Արդեն լույս են տեսել հինգ նման հատորներ, և շուտով կհրատարակվի վեցերորդը՝ «Հայ գրականությունը համաշխարհային գրականության համատեքստում» խորագրով հատորը: Նման մոտեցման և քննության մեթոդի վոր, կարևոր և հետաքրքիր գրքի համար»:

Ա. Գրիգորյանը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության և արվեստի ինստիտուտների և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի գիտական խորհուրդների, Հայաստանի գրողների, Թատերական գործիչների և կինեմատոգրաֆիստների միությունների անդամ է:

Նա Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր է, պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, ՀՀ ԳԱԱ նախագահության պատվոգրով:

Ա. Գրիգորյանը զբաղվել է Պուշկինի, Գոգոլի, Դոստոևսկու, Տոլստոյի, Չեխովի ստեղծագործությունների և ժամանակակից ռուսական բանաստեղծության քննությամբ ու վերլուծությամբ: Այսօր ևս շարունակում է իր արդյունաշատ գիտահասարակական և մանկավարժական գործունեությունը՝ հայ գրականությունը դիտարկելով ռուս և համաշխարհային գրականությունների համատեքստում և զբաղվելով գրականության տեսության ու գրական ժանրերին վերաբերող ամենատարբեր հարցերով, ինչպես և հայ-ռուս գրական կապերի պատմության ու այսօրվա հիմնախնդիրներով՝ գիտամշակութային բնագավառում իր կարևոր նպաստը բերելով հայ-ռուսական համագործակցությանը: Ասվածի խոսուն վկայությունն է գիտական վաստակի, հայ-ռուսական գործակցությանը և Հայաստանում ռուսական մշակույթի տարածման գործում ունեցած ավանդի համար Ա. Գրիգորյանին Ռուսաստանի Դաշնության Պուշկինի անվան մեդալով պարգևատրելը, որը վերջերս նրան անձամբ հանձնեց Երևանում պետական պաշտոնական այցով գտնվող ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևը:

Այսօր ևս նա շարունակում է աշխատել երիտասարդական ավյունով, գիտագրական դասական ավանդները զուգակցելով թարմ և ինքնատիպ գաղափարների ու ըմբռնումների հետ՝ գիտական ավանդականության և նորարարության ու շարունակական որոնումների կենդանի օրինակ ծառայելով իր կրտսեր գործընկերներին:

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս
Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս- քարտուղար

ՅՅ ԳԱԱ-ում Հայաստանի և Գերմանիայի մասնագետները քննարկեցին վտանգավոր ինֆեկցիաների ախտորոշման և կանխարգելման հարցերը

Հոկտեմբերի 12-ին ՅՅ գիտությունների ազգային ակադեմիայում «ConFluTech» (Control of Avian Influenza by Techology Transfer) ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում՝ նվիրված թռչնագրիպ, խոզի գրիպ, աֆրիկյան խոզի ժանտախտ առաջացնող վտանգավոր ինֆեկցիաների ախտորոշման և կանխարգելման հարցերին:

Հանդիպմանը մասնակցում էին ՅՅ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության, ՅՅ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի, Բորստելի գիտական կենտրոնի, Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական տեսչության, ՅՅ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոնի մասնագետներ Հայաստանից և Գերմանիայից:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՅՅ ԳԱԱ-ում կայացավ «Գաղափարների տոնավաճառ» խորագրով միջազգային գիտաժողովը

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայում օրերս տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, որը հայտնի է «Գաղափարների տոնավաճառ» խորագրով: Պաշտոնական անվամբ «7-րդ շրջանակային ծրագրի տեղեկատվական և գործընկերների փնտրման աջակցության միջազգային միջոցառում» գիտաժողովի շրջանակում Հայաստանը հյուրընկալել էր 90 գիտնականի՝ շուրջ 20 երկրից: «Գաղափարների տոնավաճառը» առաջին անգամ է անցկացվում Հայաստանում և հիմնական նպատակն է համագործակցության հնարավորություն ընձեռել Եվրամիության, ԱՊՀ և տարածաշրջանային երկրների բնապահպանության ոլորտի գիտնականներին ու այլ շահառուներին:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանը նշեց, որ այս գիտաժողովի արդյունքում կձևավորվեն կլիմայի փոփոխության և այլ բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր ու առաջարկներ:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վիլեն Հակոբյանն անդրադարձավ էկոլոգիական խնդիրների մասին տեղեկատվության տարածման կարևորությանը: Նա հիշեցրեց ներկաներին, որ վերջերս Հռոմի Բենեդիկտոս 16-րդ պապը մարդկային յոթ մահացու մեղքերի շարքում առաջին տեղում է դրել բնության նկատմամբ անփույթ վերաբերմունքը: Վ. Հակոբյանը ասաց, որ այսօր կենսաբանական անվտանգության հայեցակարգ ունեն գրեթե բոլոր երկրները: «Ելնելով մեր բնակլիմայական պայմաններից՝ մեզ համար առաջնային անհրաժեշտություն ունի բիոահաբեկչության դեմ հայեցակարգ ունենալը»,- ասաց նա:

Իրենց ելույթներում դոկտոր Զիգմունդ Կրասինսկին՝ Լեհաստանից, և Եվրահանձնաժողովի փորձագետ դոկտոր Վիորել Վուլտուրեսկուն՝ Ռումինիայից, անդրադարձան բնապահպանական ծրագրերի՝ չափորոշիչներին համապատասխան մշակմանն ու ներկայացմանը:

Աշխարհագրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոսֆերային խնդիրների կենտրոնի աշխարհագրական տեղեկատվության համակարգման և թեմատիկ մոդելավորման խմբի ղեկավար Շուշանիկ Ասմարյանը կարևորեց նման կոնֆերանսների անցկացումը աշխարհի գիտնականների մասնակցությամբ՝ ոչ միայն էլեկտրոնային, այլև՝ անձնական հարաբերություններ հաստատելու առումով: «Այս կոնֆերանսը բացառիկ հնարավորություն է հայ գիտնականների համար: Ներկայացնելով մեր ծրագրերը՝ մենք կարող ենք կազմել համագործակցության խմբեր՝ միասնաբար մշակելու գիտական նախագիծ և ընդգրկվել դրանցում: Օրինակ՝ այն ծրագրերը, որոնք ունի մեր «Էկո-կենտրոն»-ը, հնարավոր չէ իրականացնել առանց լուրջ ֆինանսական ներդրումների: Մենք աշխատում ենք ծանր մետաղներով շրջակա միջավայրի աղտոտման խնդիրների շուրջ: Ունենք հողի, օդի, ջրի աղտոտման հսկայական տվյալների բազա՝ հավաքված դաշտային հետազոտություններով, սակայն խնդիր կա համադրել դրանք տիեզերական հիպեռսպեկտրալ լուսանկարներին: Մեր առաջին համադրումները տվել են շատ մեծ տարբերություններ, և ֆինանսական ներդրումները՝ խնդրի համապարփակ պատկերն ստանալու ուղղությամբ ուղղակի անհրաժեշտ են»,- ասաց նա:

Նշենք, որ գիտաժողովը կազմակերպվել է «ԵՄ 7-րդ շրջանակային ծրագրի գիտատեխնիկական միջազգային համագործակցության ցանց՝ Արևելյան Եվրոպայի և միջինասիական երկրների համար» նախագծի շրջանակներում և աջակցվում է Եվրահանձնաժողովի կողմից:

Ակադեմիկոս Արմեն Գալոյանին հանձնվեց Պավլովի անվան մեդալ

2010 թ. սեպտեմբերի 19-25 Կալուգայում կայացավ Ի. Պ. Պավլովի անվան ֆիզիոլոգիական ընկերության հերթական XXI համագումարը, որին հրավիրված էր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Արմեն Գալոյանը: Համագումարում ակադեմիկոս Արմեն Գալոյանին հանդիսավորությամբ շնորհվեց Ի.Պ. Պավլովի անվան ֆիզիոլոգիական ընկերության բարձրագույն պարգևը՝ Ի.Պ. Պավլովի անվան մեդալը:

Բազմակողմանի են ակադեմիկոս Ա. Ա. Գալոյանի գիտական և գիտակազմակերպական գործունեության շրջանակները: Նա մեծ ներդրում ունի Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում նեյրոքիմիայի և նեյրոկենսաբանության զարգացման մեջ: Ակադեմիկոս Ա. Ա. Գալոյանը քաջ հայտնի է միջազգային գիտական հանրությանը և վայելում է մեծ հեղինակություն: Ա. Գալոյանը բացահայտել է օրգանիզմի երկու կարևորագույն համակարգերի՝ ուղեղի և սրտի հարաբերակցության նոր սկզբունքները: Ա. Գալոյանի կոնցեպցիան նեյրոէնդոկրինային սրտաբանության վերաբերյալ մեծ դեր խաղաց նորմայում և պաթոլոգիկ վիճակներում սրտի աշխատանքի մեխանիզմները հասկանալու համար, ինչպես նաև հանգեցրեց նոր դեղամիջոցների մշակմանը և ներդրմանը բժշկության մեջ: Նրա կողմից հայտնաբերվել են մի շարք իմունոմոդուլյատորներ, որոնք արտադրվում են հիպոթալամուսի նեյրոէնդոկրին բջիջների կողմից, բացահայտվել են դրանց քիմիական կազմերը և սինթեզվել:

Այդ աշխատանքները հետագայում շարունակվել են աշխարհի 61 տարբեր լաբորատորիաներում, այդ թվում նաև Ռուսաստանում:

Ա. Գալոյանի կոնցեպցիան այն մասին, որ սիրտը հանդիսանում է ներզատիչ օրգան,, ստացել է իր համընդհանուր ճանաչումը: «The brain immune system. Chemistry and biology of the signal molecules» ամփոփ հոդվածը տպագրվել է հեղինակավոր հրատարակությունում՝ Handbook of Neurlchemistry and Molecular Neurobiology, v. Neuroimmunology, 2010: Արմեն Գալոյանի հիմնարար հետազոտությունները նեյրոքիմիայի, նեյրոֆիզիոլոգիայի, նեյրոմորֆոլոգիայի և դեղաբանության բնագավառում հանգեցրել են պեպտիդասպիտակուցային ծագման նոր դասի դեղամիջոցների՝ հատկապես «Գալարմինի» ստեղծմանը, որոնք կօգտագործվեն ծանր ինֆեկցիոն, նեյրոդեգեներատիվ, ինչպես նաև արյան հիվանդությունների բուժման համար:

25 տարի շարունակ Արմեն Գալոյանը գլխավորել է ՌԳԱ-ի Ա. Ն. Բախի անվան կենսաքիմիայի ինստիտուտի նեյրոհորմոնների կենսաքիմիայի լաբորատորիայի մասնաճյուղը: Նա Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի միացյալ «Նեյրոքիմիա» ամսագրի հիմնադիրն է և գլխավոր խմբագիրը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արմեն Անուշավանի Գալոյանը պարգևատրվել է Ի. Պ. Պավլովի անվան Ֆիզիոլոգիական ընկերության բարձրագույն մասնագիտական պարգևով՝ Ի. Պ. Պավլովի անվան մեդալով՝ ֆիզիոլոգիական գիտության մեջ իր մեծագույն ներդրման, Ռուսաստանի և Հայաստանի ֆիզիոլոգների միջև սերտ համագործակցության զարգացման բազմամյա բեղմնավոր ջանքերի և իր 80-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Մ. ՕՍՏՐՈՎՍԿԻ
Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Ի. Պ. Պավլովի անվան Ֆիզիոլոգիական ընկերության նախագահ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Հայաստանի և Աղվանքի թագավորությունները և Բյուզանդական կայսրությունը Ժ դարում»

Ֆրանսիական գիտական հետազոտությունների Ազգային կենտրոնի (CNRS) հետ համատեղ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն 2009 թ. հունվարին կնքեց պայմանագիր, որի շրջանակում հայտարարվեց մրցույթ, և մի խումբ (թվով չորս) հայագետ բյուզանդագետներ (արևելագիտության ինստիտուտ, Մաշտոցի անվ. Մատենադարան, Գևորգյան ճեմարան) դրամաշնորհ ստացան «Բյուզանդական մշակույթի հետքերը վաղ միջնադարյան Հայաստանում» հետազոտական թեմայի կատարման համար: Այդ թեմայի իրականացման արտասահմանյան գործընկերն է Ֆրանսիայի բյուզանդագիտական նշանավոր կենտրոններից մեկը՝ «Արևելք և Միջերկրայք լաբորատորիան»: Հիշյալ թեմայի ղեկավարներն են Փարիզի գիտական հետազոտությունների գործնական դպրոցի (PEHE) ամբիոնի վարիչ Կոնստանտին Ցուկերմանը և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի թեմայի ղեկավար Ազատ Բոզոյանը: Ծրագիրն իրականացնելու համար Փարիզում և Երևանում ստեղծվեցին թեման հետազոտող երկու խմբեր, որոնց ինն անդամներից յուրաքանչյուրն ընտրեց իր ուսումնասիրության նյութը և ձեռնամուխ եղավ դրա կատարմանը: Թեմայի հիմնական նպատակն է վաղ միջնադարի բյուզանդական և հայկական պատմագրական, կանոնական, սրբախոսական սկզբնաղբյուրների նորովի քննությունը, հայ-բյուզանդական կոնտակտային աշխարհի մասին տեղեկությունների հետազոտումը:

Այս հիմքի վրա թեմայի անդամների գիտական ծրագրի առաջին տարվա արդյունքներն ի մի բերելու նպատակով Երևանում կազմակերպվեց «Հայաստանի և Աղվանքի թագավորությունները և Բյուզանդական կայսրությունը Ժ դարում» գիտաժողովը: Մեր առաջարկով, որը հավանության արժանացավ ՀՀ գիտության պետական կոմիտեի և Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի կողմից, մասնակից հետազոտողների շրջանակն ընդլայնվեց. ներգրավվեցին մի շարք այլ հետազոտողներ Ֆրանսիայից, Գերմանիայից, Ռուսաստանից և Հայաստանից: Գիտաժողովի նյութ ընտրվեց 10-րդ դարը՝ առաջին հերթին այն պատճառով, որ երկու խմբերի անդամ գիտնականների մեծ մասի հետազոտության նյութը հենց այդ դարի սկզբնաղբյուրներն էին: Կարևորվում էր նաև այն հանգամանքը, որ այդ դարաշրջանում հսկայածավալ քաղաքական տեղաշարժեր են արձանագրված Այսրկովկասում. Բագրատունիները արաբական խալիֆայությունից անկախանալով փորձում են ստեղծել սեփական տերությունը, իսկ Բյուզանդական կայսրությունը վերստին փորձում է սեփական տիրապետությունը վերահաստատել երկրամասում: Ժ դարի սկզբում Հայոց թագավորությունը, հետևելով Կովկասում եկեղեցու նվիրապետական աստիճանակարգին, իր հովանու տակ է վերցնում ողջ Այսրկովկասը՝ դաշնակցելով Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության քաղաքական շրջանակների հետ: Ճիշտ է, նույն դարի վերջում և ԺԱ դարի կեսերին Հայաստանը հետզհետե կորցրեց նվաճված ձեռքբերումները, այնուամենայնիվ Բյուզանդական կայսրության և Հայոց Բագրատունյաց պետության հակամարտության մթնոլորտում ձևավորվեց քաղաքական նոր իրավիճակ, որից ԺԱ դարի կեսերին օգտվեցին սելջուկ թյուրքերը: Այդ դարաշրջանում վերելք է արձանագրված բյուզանդական և հայկական պետական կյանքի եւ մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում: Ժամանակի սկզբնաղբյուրներից գիտաժողովի մասնակիցները կարևորեցին Հայոց կաթողիկոսներ Անանիա Մոկացու, Մաշտոց Եղիվարդեցու և Հովհաննես Դրասխանակերտցու թղթերը, որոնք Կոնստանդին Ծիրանածնի, Թեոդոր Դափնոպատեսի, Մովսես Դասխուրանցու, Ուխտանեսի, Թովմա Արծրունու և այլոց մատենագրական երկերի հետ միասին ամբողջացնում են դարաշրջանի քաղաքական տեղաշարժերի պատմությունը: Գիտաժողովում ընդգծվեց, որ այդ դարաշրջանում կարևոր սրբագրումներ են կատարվել ողջ Կովկասի մշակութային կյանքում: Պատմամշակութային այս խնդիրների բազմաթիվ տեսանկյունների քննարկմանն էլ նվիրված էր մեր գիտաժողովը, որի նպատակն էր ի մի բերել գիտության ձեռքբերումները հայ-բյուզանդական հետազոտությունների այս բնագավառում: Գիտաժողովի նպատակներից էր նաև համախմբել ՀՀ ԳԱԱ գիտությունների ակադեմիայի հասարակագիտական ինստիտուտների, Մատենադարանի, ԵՊՀ-ի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ներուժը գիտահետազոտական աշխատանքների այս բնագավառում: Գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար հրավիրվեցին բյուզանդագետների համաշխարհային ասոցիացիայի նախագահ Պետեր Շռայները, ֆրանսիական մի քանի միջնադարագիտական ինստիտուտների հիմքի վրա վերջերս ստեղծված՝ Փարիզի Արևելք, Միջերկրական ծով և Բյուզանդական կայսրություն լաբորատորիայի տնօրեն Ժան-Կլոդ Շենեն: Հրավիրվածների մեջ էին նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան և Ֆրանսիայի ակադեմիայի ինստիտուտի անդամ Ժան-Պիեռ Մահեն, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Մոնպելիեի համալսարանի պրոֆեսոր Ժերար Դեդեյանը, Փարիզ-Նանտեր համալսարանի իրավունքի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Արամ Մարտիրոսյանը և ուրիշներ:

Գիտաժողովը նվիրվեց մեր ժամանակների տաղանդավոր գիտնականներից մեկի՝ Կարեն Յուզբաշյանի պայծառ հիշատակին: Մեծ է նրա վաստակը Բագրատունյաց դարաշրջանի հայ-բյուզանդական փոխհարաբերությունների հետազոտության բնագավառում: Նրա ղեկավարությամբ գիտական հետազոտության ասպարեզում մեծ հաջողությունների են հասել այս գիտաժողովում զեկուցողներից շատերը: Նիստերից մեկում ընդգծվեց նրա վաստակը հայագիտության և բյուզանդագիտության ասպարեզում (Պ. Մուրադյան): Կոնֆերանսի գաղափարը ջերմորեն ողջունեցին Սանկտ Պետերբուրգի բյուզանդագիտական ասոցիացիայի անդամները ՌՖ ԳԱ թղթակից անդամ Ի.Պ.Մեդվեդևի կողմից գրված նամակով:

Դարաշրջանի քաղաքական պատմությանն էին նվիրված «Արցախից Կիլիկիա. Օշին իշխանը՝ Հեթումյան տան ակունքները» (Ժ. Դեդեյան), «Հայոց Արևելից կողմանց և Աղվանքի իշխանատոհմերը» (Ա. Հակոբյան), «Հայերը Ժ դարի բյուզանդական բանակում» (Ժ.-Կ. Շենե), «Աղվանից և Վրաց թագավորությունների վերականգնման հարցի շուրջ» (Ա.Եղիազարյան), «Աղուանք և Ալբանիա անվանումների շուրջ» (Բ. Հարությունյան) զեկուցումները: Մասնակիցների կողմից քննարկման նյութ դարձան նաև եկեղեցու պատմության խնդիրները. «Հայոց եկեղեցու նվիրապետական կառուցվածքը Ժ դարի Կովկասում» (Ա. Բոզոյան), «Վիճաբանություններ սուրբ հաղորդության շուրջ» (Բ. Կազո), «Վաչագան Բարեպաշտը և մասունքների պաշտամունքը» (Ժ.-Պ. Մահե), «Աղվանքից Հայաստան. Վաչագանի կանոնների ճակատագիրը» (Ա. Մարտիրոսյան), «Հայ-աղվանից կաթողիկոսությունը Ժ դարի երկրորդ կեսին» (Մ. Բալայան), «Համամ Արևելցի. բարենորոգման մի փորձ և ծիսական բարենորոգչության ձգտում Աղվանից եկեղեցում» (հ. Շահե աբդ. Անանյան), «Քաղկեդոնականությունը Աղվանքում. Զ - Ժ դարեր» (Պ. Չոբանյան): Զեկուցումների նշանակալի մասն էլ վերաբերում էին սկզբնաղբյուրների օգտագործման բանասիրական խնդիրներին. «Դիոնիսիոս Արեոպագացին և Գրիգոր Նարեկացին» (Հ. Թամրազյան), «Թեոդորոս Դափնոպատեսի առ ամիրայն Եգիպտոսի թղթի հասցեատերը» (Կ. Ցուկերման), «Փոտ պատրիարքի ժառանգության ճակատագիրը հայերի հետ աստվածաբանական բանավեճերում Ժ դարի առաջին կեսին. Արեթաս Կեսարացի և Նիկողայոս Միստիկոս» (Դ. Աֆինոգենով), «Գրիգոր Մագիստրոսը և հույն մատենագրությունը» (Գ.Մուրադյան), «Դիոնիսիոս Աղեքսանդրացու առ Մերուժան եպիսկոպոս թուղթը» (Օ. Վարդազարյան), «Լեզվական իրողություններ Մովսես Դասխուրանցու Աղուանից պատմութեան մեջ» (Ա. Ուզունեան), «Աստվածածինը Գրիգոր Նարեկացու Մատեան Ողբերգութեան պոեմում» (Ա. Մաթևոսյան), «Անանիա Մոկացու գրվածքները. անվավեր բնագրե՞ր» (Պ. Բուասոն-Շնորոքյան), «Կենարար Խաչի վերադարձի պատմությունը ըստ հայկական սկզբնաղբյուրների և նրա արտացոլումը միջնադարյան քանդակում» (Զ. Հակոբյան): Քննարկումներ տեղի ունեցան հիշատակված հարցերի շրջանակներում. դրանց մեջ կարևոր էին աղվաներեն «Ճաշոցի» վերջերս հրապարակված բնագրի շուրջ ծավալված երկխոսությունը, Ժ դարի Կովկասում Հայոց եկեղեցու խաղացած դերի գնահատականը: Որոշվեց, որ գիտաժողովի նյութերը, հիմք ունենալով Անանիա Մոկացու, Հակոբ Ծպատեցու, Մաշտոց Եղիվարդեցու, Արամի թղթերի գիտական բնագրերը և դրանց ֆրանսերեն թարգմանությունները, կհրատարակվեն ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և Փարիզի Արևելք ու Միջերկրական ծով լաբորատորիայի համատեղ գրիֆներով, իսկ ժողովածուն կներկայացվի 2011 թ. Բյուզանդագետների միջազգային կոնգրեսին:

Գիտաժողովը մասնակիցների համար ունեցավ նաև ճանաչողական նշանակություն: Ծրագրված քառօրյա գիտարշավը դեպի Հայաստանի և Արցախի պատմական հուշարձաններ, որի ընթացքում մասնակիցները փորձեցին գրավոր սկզբնաղբյուրների վկայությունները հարաբերել միջնադարից մեզ հասած նյութական մշակույթի նմուշների հետ: Սեպտեմբերի 24-ին կազմակերպվեց երեք դասաժամ սեմինար-կլոր սեղանի անցկացում Արցախի պետ.համալսարանի հայագետ ուսանողների և դասախոսական կազմի հետ, ինչպես նաև այցելություններ Վաղարշապատ, Բջնի, Սևան, Խոր Վիրապ, Գանձասար, Շուշի, Տիգրանակերտ, Ծիծեռնավանք և Նորավանք:

Ծրագրի համաղեկավար-
համակարգող՝
պ.գ.դ. Ազատ ԲՈԶՈՅԱՆ

Սուրբ Թարգմանչաց տոնին 9 ձեռագիր նվիրաբերվեց Մատենադարանին

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի ձեռքով գրված Ավետարաններից ընդօրինակված ձեռագրերը տարին բոլոր ցուցադրվում են Մաշտոցի անվան Մատենադարանի գլխավոր ցուցասրահում և միայն Սուրբ Թարգմանչաց տոնին են տեղափոխվում երկրորդ ցուցասրահ ու դրվում կողք կողքի՝ իբրև հայ թարգմանական արվեստի փառահեղ վկայություններ:

Տոնն այս տարի առիթ դարձավ նույն սրահում ցուցադրելու նաև Ամստերդամում 1660 թվականից ի վեր տպագրված հայերեն հնատիպ գրքերից քսանը՝ Աստվածաշունչը, Շարակնոցը, Գիրք սաղմոսացը, Մովսես Խորենացու «Ազգաբանութիւն տոհմին Յաբեթեան», Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» ստեղծագործությունները, Յոհան Շրյոդերի «Արամեան լեզուի գանձ» գրաբարի ձեռնարկը՝ լատիներենով, հայատառ առաջին քարտեզը՝ «Համատարած աշխարհացույցը» և այլն:

Ցուցահանդեսի բացմանը նախորդեց նշանակալի իրադարձություն. եգիպտահայ Սուրեն Բայրամյանը Մատենադարանին նվիրաբերեց 9 ձեռագիր, որոնցից մեկը բացառիկ է այն առումով, որ պարունակում է լեհահայոց համայնքի արտագաղթի վերաբերյալ կարևոր մանրամասներ:

«Ամեն անգամ հայրենիք այցելելիս ինձ հետ բերում եմ տարբեր տարիներին ձեռք բերած ձեռագրեր ու հնատիպ գրքեր՝ հանձնելու Մատենադարանին, Ազգային գրադարանին, Ազգային արխիվին, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գրադարանին: Մատենադարանին նվիրած այս ձեռագրերը վերջին 50 տարիների ընթացքում Կահիրեից արտագաղթած հայ ընտանիքներից գնված հավաքածուից են: Այդ մասունքները ձեռք եմ բերում հնավաճառներից և ամեն այցիս ժամանակ որոշակի քանակություն բերում եմ Հայաստան: Այս անգամ բերած ձեռագրերի հիմնական մասը երաժշտական են, բացառությամբ 25-էջանոց մի ձեռագրի, որն առնչվում է 1600-ականներին Լեհաստանից ծայր առած հայերի արտագաղթին»,- ասաց Բայրամյանը:



Մատենադարանին միանգամից ինը ձեռագիր նվիրաբերելը այն հազվադեպ իրողություններից է, որ սովորական օրը վերածում է տոնի. «Մատենադարանի գլխավոր գործառույթը նոր ձեռագրեր ձեռք բերելն է, դրանք պահպանելն ու գիտական շրջանառության մեջ դնելը: Ձեռագրերի հոսքը Մատենադարան ավելացել է. այս տարի արդեն ձեռք ենք բերել 80 ձեռագիր և առաջիկա ամիսներին սպասում ենք նոր նվիրատվությունների»,- ասաց Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանը:

Սուրեն Բայրամյանը մասնագիտությամբ ատամնաբույժ է, սակայն հայ գրի և գրականության ու նաև մամուլի հանդեպ սերը նրան ստիպել է հիմնական աշխատանքից զատ զբաղվել դրանցով ու դառնալ «Յուսաբեր» օրաթերթի խմբագիրը, եգիպտահայ գաղութում ծավալել մշակութային բարեսիրական գործունեություն, 1975-ից ի վեր լինել Կահիրեի թեմական ազգային խորհրդի անդամ՝ իբրև ատենադպիր:

«Պիտի ջանամ գիրքս ավարտել երկու տարի հետո, որպեսզի հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակին իմ ներդրումը բերեմ հայ մշակույթին»,- ասաց Բայրամյանը:

Մատենադարանին նվիրաբերած մեծարժեք ձեռագրերի և եգիպտահայ մամուլի բնագավառում ունեցած մեծ վաստակի համար եգիպտահայ մտավորականը Հրաչյա Թամրազյանից ստացավ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալը՝ խոստանալով, որ մոտ ապագայում իր կողմից կլինեն նոր նվիրատվություններ:

Ռուզան ՊՈՂՈՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ-100

2010 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջին տնօրեն (1958-1987), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1961), ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր (1981), ակադեմիկոս Ռուբեն Զարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական նիստը, որը բացեց ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը:

Այնուհետև Ռ.Զարյանի մասին ծավալուն բանախոսությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը: Ռ.Զարյանի մասին հուշեր պատմեցին գրող, հրապարակախոս Պերճ Զեյթունցյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Արևշատյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յակով Խաչիկյանը, Հալեպի «Պետրոս Ադամյան» թատերախմբի դերասան Վահե Սամուելյանը, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Օրդոյանը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Ալինա Փահլևանյանը:

Հոբելյանական հանդիսությունների շարքը շարունակեց Ռ.Զարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական երկօրյա (21-22 հոկտեմբերի) գիտաժողովը:



Ակադեմիկոս Ռուբեն Զարյանի գիտական գործունեությունը սկիզբ է առնում 1938-ին, երբ աշխատանքի է անցնում ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի գրականության և լեզվի ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտական աշխատակից:

1940-ին Ռ.Զարյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Աբովյանի «Նախաշավիղը» և նրա պատմությունը» թեմայով և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ի դեպ՝ Զարյանին գրականագետի համբավ բերեց հենց «Աբովյանի կյանքը» աշխատությունը, որը հրատարակվել էր 1939-ին, այնուհետև վերահրատարակվել 1940-ին: Եվ պատահական չէ, որ 1984-1990 թթ. Ռ.Զարյանը ղեկավարել է Աբովյանի տուն-թանգարանի գիտական խորհրդի աշխատանքները: 1940-ից մինչև 1943-ը Ռ.Զարյանը եղել է ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի գրականության և լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ: Զուգահեռաբար՝ Ռ.Զարյանը ղեկավարել է Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժինը (1938-1947), եղել «Սովետական գրականություն» ամսագրի պատասխանատու խմբագիրը (1941-1943):

1950-ից Ռ.Զարյանի գործունեությունն անխզելիորեն կապվում է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հետ. նա աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորում՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ երեք տարի անց՝ 1953-ին, նշանակվում սեկտորի վարիչ՝ պաշտոնավարելով մինչև 1958-ը:

1958 թվականի մայիսի 1-ին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ Արվեստների պատմության և տեսության սեկտորը վերակազմվում է Արվեստի ինստիտուտի, որի դիրեկտոր ու թատերական բաժնի վարիչ է նշանակվում Ռուբեն Զարյանը՝ պաշտոնավարելով մինչև 1987-ը:

Արվեստի ինստիտուտն իր գոյության առաջին իսկ տարիներից սկսած՝ Ռ.Զարյանի և վերջինիս շուրջ համախմբված անվանի գիտնականներ Ալեքսանդր Սահինյանի, Ռուբեն Դրամբյանի, Արամ Քոչարյանի, Մաթևոս Մուրադյանի և ուրիշների ջանքերով դարձավ հայ արվեստագիտության գլխավոր կենտրոնը՝ առաջատարի ջահն իր ձեռքին պահելով նրա պաշտոնավարման հետագա երեք և կես տասնամյակների ընթացքում: Այդ ընթացքում լույս տեսավ հայրենական արվեստի բոլոր ճյուղերը ներկայացնող արվեստագիտական գրականության պատկառելի գրադարան:

Անուրանալի է Ռ.Զարյանի ավանդը հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումների կազմակերպման ու անցկացման գործում, ինչն արվեստի ինստիտուտի և Միլանի հայկական ճարտարապետության ուսումնասիրության հետազոտական կենտրոնի միջև համագործակցության կարևոր արդյունքներից էր: 1975-ին Իտալիայի Բերգամո քաղաքում հրավիրված առաջին սիմպոզիումին մասնակցեցին աշխարհի տարբեր երկրների շուրջ 60 ճանաչված գիտնականներ (պատվիրակության ղեկավարը հենց Զարյանն էր): Երկրորդ (1978) և չորրորդ (1985) սիմպոզիումները (Ռ.Զարյանը կազմկոմիտեի նախագահի տեղակալն էր) կայացան Երևանում, երրորդը (1981) և հինգերորդը (1988)՝ վերստին Իտալիայում: Դրանք զգալի ավանդ եղան ոչ միայն հայ ճարտարապետության, այլև հայկական արվեստի ուսումնասիրության բնագավառում: 1981-ին Ռ.Զարյանն ընտրվել է Հռոմի «Տիբերինա» ակադեմիայի թղթակից անդամ:

1962-ին Ռ.Զարյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ նվիրված Պետրոս Ադամյանի արվեստին, և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան, մեկ տարի անց՝ 1963-ին, նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

1965-ից Ռ.Զարյանը ղեկավարել է արվեստագիտության դոկտորի և թեկնածուի, ինչպես նաև ճարտարապետության դոկտորի և թեկնածուի աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքները:

1966-ին Ռ.Զարյանը արվեստի ինստիտուտին առընթեր հիմնադրում է Շեքսպիրագիտության հայկական կենտրոնը, որի նպատակներն էին՝ ամբողջացնել շեքսպիրյան երկերի հայերեն թարգմանությունները, նախապատրաստել ու հրատարակության հանձնել դրանց լիարժեք ժողովածուն: Պարբերաբար հրատարակվող «Շեքսպիրական» մատենաշարի էջերում լուսաբանվել են «Շեքսպիրը և հայ հասարակական միտքը», «Շեքսպիրյան թարգմանությունների պատմությունը», «Շեքսպիրյան պիեսների բեմական կյանքը հայ թատրոնում» և բազմաթիվ այլ թեմաներ: Կենտրոնին կից՝ Շեքսպիրի ծննդյան 400-ամյա հոբելյանի առիթով ստեղծված, իր բնույթով եզակի, այսօր Ռուբեն Զարյանի անունը կրող Շեքսպիրագիտական գրադարանում հավաքված են ավելի քան 3000 գրքեր՝ աշխարհի 36 լեզուներով: Կենտրոնի և գրադարանի ստեղծման, ինչպես նաև հայկական շեքսպիրագիտության կարևոր պրոբլեմների մշակման գործում անգնահատելի է Ռուբեն Զարյանի վաստակը. նրա «Էջեր հայկական շեքսպիրապատումից» երկհատորյակը 1981-ին արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի: Նշենք, որ Ռ.Զարյանն ընտրվել է Գերմանական շեքսպիրյան ընկերության անդամ (Վայմար, Գերմանիա, 1970):

Ընդգրկուն է Ռ.Զարյանի գրականագիտական և թատերագիտական ժառանգությունը, պատկառելի՝ նրա հրատարակած գրքերի և հոդվածների քանակը:

Նրա գրականագիտական հետաքրքրությունների կենտրոնում էի Խ.Աբովյանը: Գրականագետը հրատարակության է պատրաստել Գաբրիել Սունդուկյանի երկերի գիտական հրատարակության երեք հատորների տեքստը: Ռ.Զարյանն ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ (1943-ից) և (1977-1987), Գրականության և արվեստի թանգարանի գիտական խորհրդի անդամ (1958-ից):

Թատերագիտության բնագավառում Ռ,. Զարյանի կարևոր ներդրումը հայ բեմի մեծ վարպետներ Սիրանույշին ու Պետրոս Ադամյանին նվիրված մենագրություններն են, ուսումնասիրությունները հայ թատրոնի մյուս գործիչների մասին:

Սիրանույշին նվիրված աշխատասիրության մեջ հեղինակը, հենվելով պարբերական մամուլում պահպանված ռեցենզիաների, նամակագրության, մեմուարային գրականության, դերասանուհու խաղընկերների և հանդիսատեսների հետ ունեցած զրույցների վրա, բացահայտել է հայ մեծ դերասանուհու պատմական դերն ու նշանակությունը: Համաշխարհային խոշորագույն ողբերգակներից մեկին՝ Պետրոս Ադամյանին նվիրված երկու հատորներում, ի մի բերելով պարբերական մամուլի էջերում սփռված քննախոսականները, հիշողությունները, արխիվային փաստաթղթերը, գրած և ստացված նամակները, թատերագետը լույս աշխարհ է բերել դրանք և դրանց հիման վրա ներկայացրել մեծ դերասանի կյանքի պատմությունը, կատարել նրա բեմական արվեստի քննությունը:

«Թատերական գործիչներ» աշխատության մեջ Զարյանն ուսումնասիրել է խորհրդահայ բեմի ականավոր վարպետների ստեղծագործությունը, անդրադարձել նրանցից ամենանշանավորներին՝ Օլգա Գուլազյանին, Հասմիկին, Արուս Ոսկանյանին, նրանց, ում գործունեությանը հետևելու հնարավորություն է ունեցել հենց ինքը:

Ռ.Զարյանի աշխատությունները թարգմանվել են ռուսերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն:

Ընթերցողի առջև որպես իր ապրած ժամանակաշրջանի, մասնավորապես 20-րդ դարի երկրորդ կեսի, հայ արվեստի պատմության «յուրահատուկ հանրագիտարան» են հառնում Ռ.Զարյանի հուշագրությունը՝ «Հուշապատումի» և «Մայրամուտից առաջ»-ի հատորները, որտեղ ուրվագծվում են հեղինակի հետ շփումներ ունեցած հայ արվեստի ներկայացուցիչների դիմանկարները:

Գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Ռ.Զարյանը 1974-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1986-ին՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:

Մեծ է Ռ.Զարյանի մանկավարժական գործունեության արժեքը: 1949-1990-ական թվականներին նա «Հայ թատրոնի պատմություն» առարկան է դասավանդել Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, 1948-1958 թթ. ղեկավարել է Երևանի թատերական ինստիտուտի արվեստի պատմության և տեսության ամբիոնը:

Զարյանի գիտական, գիտակազմակերպական ու մանկավարժական աշխատանքը մշտապես ուղեկցվել է հասարակական ակտիվ գործունեությամբ: 1974-1981 թվականներին Ռ.Զարյանին է վստահվում ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր գրականության, արվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության ասպարեզում պետական մրցանակների հանձնաժողովի նախագահի գործը: Նա ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ (1977-1987), Հայկական թատերական ընկերության (1942-ից), Հայկական թատերական ընկերության վարչության (1952-ից), Հայկական թատերական ընկերության նախագահության (1964-ից), Հայաստանի թատերական գործիչների միության նախագահության (1987-ից), Գ.Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստական խորհրդի (1953-ից), Հայկական սովետական հանրագիտարանի խմբագրական կոլեգիայի (1970-1987), «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրական կոլեգիայի (1955-ից) անդամ:

Հայրենիքը բարձր է գնահատել Ռ.Զարյանի վաստակը. 1961-ին նրան շնորհվել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, նա «Պատվո նշան» (1953) և «Ժողովուրդների բարեկամության» շքանշանների (1979, ծննդյան 70-ամյա հոբելյանի կապակցությամբ) ասպետ է, պարգևատրվել է Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատվոգրերով (1969, 1989):

Ռուբեն Զարյանն իր մարդկային անդիմադրելի հմայքով գերում էր շրջապատին՝ վայելելով իրեն ճանաչողների անկեղծ համակրանքն ու խորին հարգանքը:

Արարատ ԱՂԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն

ԿՈԹՈՂԱՅԻՆ ԳՈՐԾ

ԱՄՆ-ում վերահրատարակվել է «Հայաստանի պատմական բառարանը»

Լենհեմում (Մերիլենդ) տեղակայված «Ռոումեն և Լիթլֆիլդ» հրատարակչական ընկերությունը վերջերս լույս է ընծայել դոկտ. Ռուբեն Պոլ Ադալյանի հեղինակած «Հայաստանի պատմական բառարան» կոթողային աշխատանքի (750 էջ) երկրորդ, վերանայված և նոր տվյալներով հարստացած հրատարակությունը, որը ներառվել է «Եվրոպայի պատմական բառարանների» շարքում՝ որպես 77-րդ հատոր: Բառարանի առաջին հրատարակությունը, ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի օգոստոսի 21-ի համարի, իրականացվել էր 2002-ին:

Այդ ժամանակ Ռոուան համալսարանից դոկտոր Ռոբերտ Հյուսենը շնորհավորել էր դոկտ. Ռուբեն Ադալյանին՝ «որոշակի սահմաններում այդքան շատ տեղեկություն տեղադրելու իր հսկայական ջանքերի համար»: «Հատորը հրաշալիորեն գրված եզակի մի ձեռնարկ է, որտեղ ամփոփված փաստերն ու տեղեկությունները ուրիշ ոչ մի՛ տեղ միասին հնարավոր չէ գտնել»,- գրել էր նա: Իսկ Պորտլենդի պետական համալսարանից հանգուցյալ դոկտոր Լադիս Քրիստոֆը հավելել էր, որ «...հատորը ընդարձակ և արժանահավատ տեղեկություններ է պարունակում դարեր շարունակ պարսկական, օսմանյան և այլ տիրապետությունների տակ չարչարված, բայց վերջերս իր անկախությունը ձեռք բերած Հայաստանի Հանրապետության մասին, նրա հասարակական-պատմական և քաղաքական կյանքի ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի մասին: Հատորը մեծապես հաջողված աշխատություն է»:

Ավելացնենք, որ դոկտ. Ադալյանը Կովկասի և Մերձավոր Արևելքի երկրների պատմության մասնագետ է: Դոկտորականը պաշտպանել է Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանում: Այլ վայրերի թվում նա դասավանդել է Վաշինգտոն համալսարանի միջազգային գործերի էլիոթ ֆակուլտետում, Զոն Հոփկինսի համալսարանի միջազգային բարձրագույն ուսումնասիրությունների բաժնում և Զորջթաուն համալսարանի արտաքին քաղաքականության ֆակուլտետում: Նա նաև Հայ ազգային ինստիտուտի և Վաշինգտոնի Հայոց ցեղասպանության ապագա թանգարանի տնօրենն է: Նախկինում եղել է Ամերիկայի հայկական համագումարի ուսումնասիրությունների և վերլուծությունների բաժնի տնօրեն: 1993-ին ավարտել է մի ծրագիր, որով հարստացրել է Ամերիկայի պետական արխիվները հայերի ցեղասպանությունը վկայող փաստաթղթերով: Դրանց հիման վրա Զեդվիկ-Հիլի ընկերությունը հրատարակել է միկրոչիպերի վրա 37 հազար էջ նյութ և 476 էջով մի հատոր-ուղեցույց ամերիկյան արխիվներում գտնվող Հայոց ցեղասպանության փաստաթղթերի վերաբերյալ: Նա նաև աջակցել է խմբագրմանը մրցանակի արժանացած «Ցեղասպանության հանրագիտարան» (1999 թ.) կոթողային հատորի:

ՀԱՄԱԼԱՀՈՍՀՈՍԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՐՈՒԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՎՐԱ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Հրապարակում կանգնեց պետական դեկրետով օրինականացած նոր ուղղագրությունը, որն արտաքին տպավորությամբ հնից հրաժարվելն էր, ներքին բովանդակությամբ՝ մայրենի լեզվի փրկությունը: Հենց այս արտաքին տպավորությունն էր, որ ժամանակավորապես կաշկանդեց կենտրոնին՝ շարունակելու իր պարտադրանքը: Շեշտում ենք ժամանակավորապես արտահայտությունը, որովհետև ազգերի ծուլումը, ազգային լեզուների վերացումը ծրագրային պահանջ է եղել մինչև ԽՍՀՄ փլուզումը:

Չունենալով կոնկրետ փաստ ու վկայություն՝ այնուամենայնիվ մենք համոզված ենք, որ այդ դժնդակ օրերին նման քաղաքական ճկունություն ու հեռատեսություն կարող էր ունենալ քաղաքական շիկացած մթնոլորտում կոփված, բարձր մտավորական հատկանիշների տեր, Լենինի հետ սերտ շփումներ ունեցած, նրա ծրագրերին տեղյակ, 1921 թ. հուլիսին Կովբյուրոյի նիստում Ղարաբաղի հարցում իր խաբված լինելը գիտակցած Ալեքսանդր Մյասնիկյանը: Մենք խորապես համոզված ենք, որ Մյասնիկյանի քաղաքական գաղտնի հանձնարարությունն է կատարել «Ես իմ անուշ Հայաստանիի» հեղինակ Ե. Չարենցը՝ գրելով այսպիսի տողեր.

Օ՜, մռայլախոս դպիրներ սև,
Դու, Շնորհալի, և դու Նարեկ,
Դուք, մագաղաթյա և հանճարեղ,
Դուք, զարհուրելի, ինչպես Դարեհ,
Դուք, պատան մտքի, դուք անարև,
Որ սրտի համար դարե՜ր, դարե՜ր,
Կերտել եք դագաղ, պատյան քարե,
Եվ սգո համար դժնյա տառեր....

Գրված է կոպիտ անմիջականությամբ, գռեհիկ ժխտողականությամբ, որը պահի հրամայականն էր, լեզուն փրկելու գերագույն ճիգը, հայրենիքի համար զոհվելու պատրաստակամությունը: Ո՞վ կարող է պնդել, թե Չարենցը կարող էր ներքին մղումով, անկեղծ համոզմունքով նման տողեր գրել: Նման իրավիճակների պարտադրանք չէ՞ բանաստեղծի խոսքը՝ «Ուրիշ ոտքեր կախաղանիս թող մոտ չգան»:

Եվ պատահական չէ ընտրությունը: Այս տողերի գրողը այդ օրերին Լենինին երկինք բարձրացնող հայոց բանաստեղծն է, որի խոսքը կարող է տպավորություն գործել: Բայց Լենինը անպատիժ չէր թողնի իր պարտադրանքի նման շրջանցումը: Ռեֆորմի հրապարակումից անմիջապես հետո՝ հենց մարտին, Մյասնիկյանին մեկուսացնում են Հայաստանից, «առաջ քաշում» Անդրերկրկոմ, ապա ոչնչացնում օդում՝ մինչև վերջ էլ նրա անվանը կցած պահելով սպեցիֆիկ պիտակը, չհամարելով իրական բոլշևիկ:

Ահա այս ձևով փրկվեց հայոց լեզուն հերթական պատուհասից, որի երկրորդ «հրատարակությունը» տեղի ունեցավ 1935 թ.: Հերթական պարտադրանքը ռուսերենի այբուբենն ընդունելն էր, որը մտավ բոլոր հանրապետություններ, բացի Հայաստանից ու Վրաստանից: Այս անգամ քաղաքական ճկունության կամ խորամանկության հարց չառաջացավ. մերժումը կատարվեց ռուսական «սուխոյ» ճանապարհով:

1935 թ. Ստալինը Խանջյանի միջոցով երեք պահանջ ներկայացրեց հայ մտավորականությանը: Առաջինը ռուսերենի այբուբենն ընդունելն էր: Երբ այդ պահանջը բարձրաձայնվեց մտավորականների հավաքում, Աճառյանը վեր կացավ սեղանի մոտից, շարժվեց դեպի պատուհանը՝ հայտարարելով. «Թողեք ինձ այստեղից գցեմ, այնուհետև ինչ ուզում եք, որոշեցեք»: Անակնկալի եկած Խանջյանը Աճառյանին բերեց նստեցրեց սեղանի մոտ՝ հայտարարելով. «Հարցը լուծված է. այբուբեն չենք փոխի»: Հատուցումը եղավ Խանջյանի սպանությունը Թիֆլիսում, իսկ Աճառյանն էլ ընկավ ՊԱԿ-ի զնդան, ստորագրեց ճապոնական լրտես լինելու մեղադրանքի տակ՝ պայմանով, որ իրեն թուրքական լրտեսի մեղադրանք չներկայացնեն:

Այսպիսին էր իրադարձությունների զարգացման պատմական ընթացքը, մանավանդ լեզվական քաղաքականության բնագավառում: Բոլշևիկները, հավատարիմ իրենց որդեգրած ծրագրին, բոլոր միջոցներին դիմում էին՝ ազգերի ծուլումն ու վերացումը իրականացնելու համար, որի հարցերի հարցը ազգային լեզուների վերացման պահանջն էր: Այդ քաղաքականությանը հակընդդեմ՝ մերոնք կարողացան գերագույն վճռականությամբ փրկել մեր լեզուն՝ տալով նաև թանկագին զոհեր: Մերոնք ոչ միայն կարողացան Լենինի, ապա Ստալինի պարտադրանքները շրջանցել, այլև 1975 թ. հայոց լեզուն հռչակել հանրապետության պետական լեզու՝ ամրագրելով սահմանադրության մեջ:

Ահա թե ինչու լեզվի հարցում բոլշևիկյան հետևողական պարտադրանքի և դրա հաղթահարման արդյունքի համատեքստում ժամանակի մեծերի ու փոքրերի կարծիքները մղվում են հետին պլան և չի կարելի շահարկման առարկա դարձնել հատուկ նպատակների համար: Մեր ժողովուրդը հերթականորեն կարողացավ իր լեզուն փրկել օտար ավերիչ պարտադրանքից: Այս է վերջնական արդյունքը: Ինչ վերաբերում է զուտ ուղղագրական շահարկումներին, դրանց անդրադառնում ենք շահարկվող տառերի հերթականությամբ:

Վ-ւ

Մաշտոցը ստեղծել է վ տառ, որի հնչումը կենդանի խոսքում երբևէ փոփոխության չի ենթարկվել, իսկ գրավոր խոսքում հաճախ խեղաթյուրվել է՝ գրվելով լեզվին պարտադրված արհեստական ւ կամ նույնքան արհեստական ու տառով: Այդ ւ տառը ստեղծեցին հունաբան դպրոցի քերականները՝ երկատելով Մաշտոցի միատառ ուն-ն, որպեսզի ունենան հունարենին նման մի էպսիլոն ս (ու) տառ: Էպսիլոն այդ տառը հաճախ մեր լեզվում գրվել է ո, ի և հիմնականում ու ծայնավորների փոխարեն՝ երբեք չդադարելով վ հնչումից իր բնական տեղերում:

Մխիթարյան լեզվաբանները «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հիմնարար աշխատանքում ամենայն բարեխղճությամբ արձանագրել են ւ տառի գործածության դեպքերը՝ ցուցադրելով դրանց ճչացող արհեստականությունը: «Իւ ըստ տեղւոյն ձայնավոր երկբարբառ, իբր եու, իյու, և ըստ տեղւոյն բաղաձայն՝ որպէս մեղմ վ... Ի ւ իբրու ձայնավոր հայտնի տեսանի առ նախնիս գրութ բառիցդ Եգիւպտոս, Եգիպտոս, Եգւպտոս, Եթէովպացի, Եթիովպացի, Եթւոպացի: Կիւպրոս, Կիպրոս, Կւպրոս. կիւրակէ,կիրակէ, կւրակէ: Ի ւ իբրու բաղաձայն՝ ի մեզ լծորդ է ընդ վ. զի անխտիր գրի, վաւաշ-վավաշ, օթեւան-օթեվան, իջեւան-իջեվան-իջավան-իջաւան և այլն: ԵՒս և ու և ո լծորդ գտանին, զոր օրինակ լուղակ, լուղել, կամ լողակ, լողալ. կցուրդ կամ կցորդ»: Ինչպես տեսնում ենք, Կւպրոս բառում ւ-ն զբաղեցրել է ի հնչյունի տեղը, գոչիւն բառում՝ ու-ի տեղը, եւթն (յոթ) բառում՝ ո-ի տեղը, վաւաշ բառում՝ վ-ի տեղը: Վ-ն հանդես եկավ միանգամից չորս հնչյունի փոխարեն՝ չլինելով դրանցից և ոչ մեկը: Ուշագրավ է, որ յոթ բառը տառագրվել է հինգ ձևով՝ եաւթն, եոթն, եւթն, իւթն, եւթ:

Այժմ տեսնենք՝ ինչպես ստեղծվեց այն:

Հունաբան դպրոցի լեզվագետները, թարգմանելով Թրակացու քերականությունը, հունարեն լեզվի օրենքները մեխանիկորեն պարտադրեցին հայոց լեզվին՝ ստեղծելով մեր լեզվին խորթ ու օտար արհեստականությունների մի կատարյալ քաոս: Այդ արհեստականություններից էր նաև հունարենին և եվրոպական լեզուներին հատուկ երկբարբառների համակարգը, որը մեր լեզվի համար խորթ ու օտար է: Երկբարբառը լեզվական այն իրողությունն է, երբ տվյալ լեզվում երկու ձայնավոր իրար կողքի հանդես են գալիս մի սերտ միասնությամբ և, որպես այդպիսիք, անբաժանելի են, բառի մեջ դառնում են մեկ վանկ: Մինչդեռ մեր լեզվում երկու ձայնավոր իրար հետ հանդես գալ չեն կարող, անպայման նրանց արանքում հայտնվում է մի վ, յ ձայն, օտար բառերում նաև մի հ հնչյուն, ինչպես Աբրաամ-Աբրահամ, և ապահովում ձայնավորների լիարժեք արտասանությունը: Նույնիսկ անուրանալի երկբարբառ ունեցող օտար բառեր օգտագործելիս ձայնավորներից մեկը լեզուն փոխում է բաղաձայնի՝ հարմարեցնելով իր արտասանական համակարգին, ինչպես՝ եուրո-եվրո, Մարիամ-Մարյամ: Եվ ահա այս «միաբարբառ» լեզվի համար պետք է ստեղծեին երկբարբառների մի ճոխ համակարգ:

Եվ ստեղծեցին՝ շրջանառության մեջ դնելով հնչական մերձակցություն ունեցող տառերի լծորդության գաղափարը, որի արդյունքում մի հնչյուն կարող է փոխվել մերձավոր հնչում ունեցող մի այլ հնչյունի: Բայց քանի որ երկբարբառ ստեղծելու համար անհրաժեշտ էր իրար կողքի գտնվող երկու ձայնավոր, որ չկար մեր լեզվում, կից ձայնավորների արանքում հաճախակի հանդես եկող վ և յ հնչյունները արհեստականորեն դարձրին ձայնավոր՝ նշանագրելով այլ տառերով: Յ տառը ե և ի ձայնավորով փոխարինելու հարցում նրանք ունեին «բռնելու» տեղ: Ի նախդիրը ձայնավորով սկսվող բառերում փոխվում է յ (հ) ձայնի, ինչպես՝ ի դէպ, բայց յառաջ: Հետևապես ի և յ հնչյունները լծորդ են և փոխարինում են մեկը մյուսին: Այդ տրամաբանությամբ յու երկհնչյունի յ-ն փոխարինվեց ի-ով. Յա երկհնչյունը շեշտից զրկվելու դեպքում հնչյունափոխվում է պարզ է ձայնավորի, ինչպես՝ պատանյակ-պատանեկիկ, մատյան-մատենագիր:



Հետևապես յ և ե տառերը ևս լծորդ են, փոխարինում են մեկը մյուսին: Ավելորդ է ասել, որ յա երկհնչյունը եա դարձրին նաև բոլոր այն դեպքերում, երբ այն չէր հնչյունափոխվել, ինչպես՝ սենեակ, մատեան, դղեակ և այլն: Եվ այսպես յա և յու երկհնչյունները դարձան «երկբարբառներ»: Բայց քանի որ այդ փոխատեղումները արհեստական էին ու շփոթեցնող, մատենագրության մեջ այդ երկու երկբարբառները հանդես էին գալիս զուգահեռ, բառերը տառագրում կրկնակի ուղղագրությամբ, ինչպես՝ գեւղ-գիւղ, բեւր-բիւր, հարեւր-հարիւր և այլն:

Հայոց լեզվին երկբարբառ պատվաստելու հարցում ամենից արհեստականն ու բռնազբոսիկը մաշտոցյան վ տառին ու-ի հնչում վերագրելն էր, որը դարձյալ պայմանավորված էր լծորդ կոչված հնչյունների փոխատեղմամբ: Հայտնի է, որ բառամիջի ու ծայնավորը շեշտից զրկվելու դեպքում փոխվում է ը-ի կամ սղվում, դուրս մնում, ինչպես՝ տուն-տընակ, շուն-շըներ, ումպ-ըմպել, նուրբ-սըրբի, կամ գարուն-գարնան և այլն: Հետևապես ու և ը ձայնավորները լծորդ հնչյուններ են, որ կարող են փոխատեղվել: Միաժամանակ ու-ով վերջավորվող բառերը ձայնավորով սկսվող բառամաս ընդունելու դեպքում, լեզվական մի այլ օրենքի համաձայն, ու-ն փոխում են վ ձայնի, որը հայոց լեզվի բացառություն չունեցող օրենքներից է, ինչպես՝ առու-առվակ, ծու-ծվածեղ, կատու-կատվի, ուրուուրվական և այլն: Հետևապես ու-ն և վ-ն ևս լծորդ հնչյուններ են: Եվ ահա երկու լծորդությունների ու-եհո» բառի որոշակի դիրքերում իրար կողք ընկնելով, դառնում են մի թանձրացյալ ու, ինչպես՝ նըվեր-նուեր, թըվական-թուական, որը և սկիզբ է դառնում, որ բաղաձայնին հաջորդող վ-երը վերափոխեն ու-ի, ինչպես՝ զինվոր-զինուոր, բանվոր-բանուոր, գգվեմ-գգուեմ և այլն: Բայց դրանով հարցը դեռ վերջնական լուծում չստացավ: Հունարենին հարազատ մնալու համար հարկավոր էր ունենալ մի էպսիլոն (փոքր) (ս) տառ ևս, որին վերագրեցին ու-ի հնչական արժեք, բայց տառացիորեն ոչնչի հասնել չկարողացան, բացի գրության մեջ անպարփակ խառնագրություն մտցնելուց: Այդ արհեստական օրենքները պատճառ դարձան, որ 1500 տարի շարունակ միևնույն բառը գրվի երեք տարբեր ուղղագրությամբ, ինչպես՝ զինվոր-զինուոր-զինուոր, նվեր-նուերնուեր և այլն: Այս խառնագրության համապարփակ վիճակագրությունը ներկայացրել է Ս. Գյուլբուդաղյանը «Հայերենի ուղղագրության պատմություն» աշխատության մեջ՝ սկսած 5-9-րդ դդ. հազվագյուտ վիմական արձանագրություններից մինչև 16-րդ դար:

Եթե այդ արհեստական ուղղագրությունը շատ թե քիչ պահպանվել է հոգևոր գրականության մեջ, աշխարհիկ գրականության մեջ՝ դատաստանագիրք, բժշկարան, պատմագրություն, ինչպես նաև հիշատակարաններում ու վիմական արձանագրություններում իշխողը եղել է վ-ի գրությունը: Այսպես 5-9-րդ դդ. պահպանված վիմական արձանագրությունների 8 բառերից 6-ում գրված է վ՝ (տվանք, հրճվանք և չորս տեղ թվական), երկու բառում՝ ւ (թըւականութիւն, Առւեղեան) և ոչ մի ու: Կամ 1265 թ. գրված «Դատաստանագրքում» համապատասխան բառերում ու է գրվել 9 բառում, ւ՝20 բառում, իսկ 65 բառում գրվել է վ: Սա վկայությունն է այն իրողության, որ մաշտոցյան վ-ն ու կամ ւ տառերով փոխարինելը հակալեզվական արհեստականություն է եղել, և ինչքան էլ փոխել են, միշտ էլ արտասանվել է վ: Այո՛, բաղաձայնից հետո հանդես եկող վ-երը տառագրվել են ու-ով կամ ւ-ով երկբարբառներ ստեղծելու համար: Սխալվում է պարոն Որբերյանը, որ փակագծերի մեջ ավելացնում է. «Բացի բարւոք բառից» արտահայտությունը: Պարոնը կամ չգիտի, կա՛մ շրջանցում է այն իրողությունը, որ այդ բառը մատենագրության մեջ ունեցել է 6 տարբեր գրություն՝ բարիոք, բարեւք, բարիօք, բարեօք, բարեովք, բարեօվք (տե՛ս Ղ. Աղայան, հ. 3, էջ 351): Ահա այսպիսին է եղել դասական ուղղագրության գործնականը:

Արտաշես
ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

(Շարունակելի)

ՄՇԱԿՈՒՅԹ

Բացվեցին Նորատուսի պատմական գերեզմանոցի վերանորոգված ցանկապատն ու մուտքը

Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղում օրերս կայացավ Նորատուսի պատմական գերեզմանոցի ցանկապատման ծրագրի ավարտի շնորհանդեսը, որին մասնակցեցին Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը, ՀՀ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Մարի Յովանովիչը, ՀՀ-ում Իտալիայի պատվո հյուպատոս Անտոնիո Մոնտարիոն, «Վիվասել ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագրի» ղեկավար Ռիչարդ Նեյը, Նորատուսի համայնքի ղեկավար Մուրադ Հարությունյանը, պաշտոնական այլ անձինք:

Նորատուսի պատմական գերեզմանոցի ցանկապատման ծրագիրը, որը նախաձեռնել է «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր» կազմակերպությունը՝ ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան և Նորատուսի գյուղապետարանի աջակցությամբ, մեկնարկել է այս տարվա ապրիլի 28-ին և ավարտվել սեպտեմբերի 6-ին: Պատմական գերեզմանոցը, որտեղ պահպանվել են 9-18-րդ դարերով թվագրվող վեց հարյուրից ավելի գեղաքանդակ խաչքարեր և սրբատաշ շարվածքով մատուռը, ցանկապատվել է 2 միլիոն 185 հազար դրամի ներդրմամբ, որից 1 միլիոն 228 հազարը պատկանում է ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատանը, Իտալիայի և Նորվեգիայի պատվո հյուպատոսներին և «Վիվասել ՄՏՍ» ընկերությանը, իսկ 955 հազարը՝ Նորատուսի գյուղապետարանին:

Մարի Յովանովիչը, ելույթ ունենալով հանդիսության հարյուրավոր մասնակիցների առջև, նշեց, որ իր համար մեծ պատիվ է նման ընդունելության արժանանալը և ուրախալի, որ պատմական արժեքների պահպանության գործի համար այսքան մարդիկ են հավաքված, մանավանդ երիտասարդներ ու պատանիներ: «Ես ոչ միայն հպարտ եմ այն գործերով, որ ԱՄՆ-ի կառավարությունը ծավալել է Հայաստանում, այլ նաև ամերիկացի այն անհատներով, ովքեր մշակութային արժեքների պահպանման ու ճանաչման համար ջանք չեն խնայում: Այդպիսի անհատներից մեկն էլ «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագրի» ղեկավար Ռիչարդ Նեյն է: Եվ հպարտանում եմ, որ այս գործը մենք ենք նախաձեռնել՝ աշխարհին ցույց տալով, թե հոգևոր ինչ արժեքներ են կրում Հայաստանն ու Նորատուսը: Հավատացած եմ, որ այսուհետև նորատուսցիներն ավելի մեծ ոգևորությամբ կպահպանեն այս բացառիկ նշանակության խաչքարերը»,- նշեց դեսպանը:

«Այս ամենը մենք կառուցել ենք ոչ թե մեզ, այլ Հայաստանի ու Նորատուսի,- հայերենով ներկաներին դիմեց Ռիչարդ Նեյը,- և ես այսօր աշխարհի ամենահպարտ մարդն եմ, որ կարողացել եմ պետք գալ համաշխարհային նշանակության մշակույթի և արվեստի այսպիսի կոթողների պահպանության գործին»:



Մինչև տարեվերջ լույս կտեսնի «Հայաստանի Կարմիր գրքի» երկրորդ հատորը

Անհետացման եզրին կանգնած՝ Սևանի իշխանը, հայկական իժը, սև արագիլը, գորշ արջը և շատ այլ կենդանատեսակներ տեղ են գտել «Հայաստանի Կարմիր գիրք» նոր հրատարակությունում, որը տպագրվում է քսան տարի ընդմիջումից հետո՝ նոր չափանիշներով: Ինչպես «Արմենպրեսին» հայտնեց Հայաստանի բնապահպանության նախարարության կենսաբազմազանության բաժնի վարիչ Տատյանա Դանիելյանը, հերթական «Կարմիր գրքի» հրատարակության 10 տարի հետաձգման պատճառը ֆինանսական միջոցների բացակայությունն էր: Գրքի առաջին հատորը՝ մոտ վեց հարյուր էջ, արդեն տպագրված է, երկրորդը լույս կտեսնի մինչև տարեվերջ, որը, ի տարբերություն նախկինի, ունի նաև սնկերի ու անողնաշարավորների հավելյալ բաժիններ:Նոր գրքում նախկին 386-ի փոխարեն տեղ է գտել 452 բուսատեսակ, իսկ նախկին 99 կենդանատեսակի փոխարեն՝ 153:

«Կարմիր գիրք» կազմելը դժվարին աշխատանք է, գործընթացում քառասունից քառասունհինգ մասնագետ է ընդգրկված: Տարվում են մանրակրկիտ ուսումնասիրություններ, որոնց արդյունքը տարիների քրտնաջան աշխատանքից հետո է միայն տեսանելի»,- ասաց Տ. Դանիելյանը:

ԱՅԼԱՊԱՏԿԵՐ

Աշխարհում 1 մլրդ մարդ թերասնվում է

Հայաստանում՝ թերասնման միջին մակարդակ

Պարենային քաղաքականության միջազգային հետազոտական ինստիտուտի կազմած «2010 թ. սովի համընդհանուր ինդեքսի» համաձայն՝ աշխարհում այսօր թերասնվում է ավելի քան 1 մլրդ մարդ:

Փաստաթղթի հեղինակների կարծիքով, նման բարձր ցուցանիշի գլխավոր պատճառը երեխաների թերասնվելն է: Սովի ամենաբարձր մակարդակը արձանագրված է Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներում և Հարավային Ասիայում: Կառավարություններին կոչ է արվում պայքարել առաջին հերթին մանուկների թերասնման դեմ:

Հետազոտությունն ընդգրկում է նոր զարգացող և անցումային տնտեսություն ունեցող 122 երկրներ: Դրանցից 29-ում իրավիճակը գնահատվում է «խիստ վտանգավոր» և «վտանգավոր»: Իրավիճակը վտանգավոր է Հնդկաստանում, Սուդանում, Եթովպիայում և մի շարք այլ երկրներում:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը սով է համարում օրական 1800 կիլոկալորիայից պակաս սպառելը: Դա անհրաժեշտ նվազագույնն է առողջ և ակտիվ կյանքի համար:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեծ մասում սովի ցուցանիշները ամենացածր մակարդակի վրա են, այսինքն՝ վիճակը համեմատաբար լավ է: Սակայն Ուզբեկստանում, Թուրքմենստանում, Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում արձանագրված է թերասնման միջին մակարդակ:

BBC-ն նշում է, որ 1990-2006 թթ. աշխարհում սովյալների թիվը կրճատվել էր, բայց վերջին տարիներին կրկին աճել է: 2009-ին թերասնվում էր շուրջ 1 մլրդ մարդ:

Վերջին 1 տարում ցուցանիշները վատթարացել են ԿԺԴՀ-ում և աֆրիկյան 8 երկրներում: Զեկուցագիրը հաշվի է առնում սպառվող սննդի կալորիականության պակաս զգացող մարդկանց թիվը, մինչև 5 տարեկան թերաճ երեխաների թիվը և մանկական մահացության մակարդակը: Ենթադրվում է, որ ամենամեծ վտանգի ենթակա են մինչև 2 տարեկան երեխաները. թերասնումը սպառնում է նրանց ֆիզիկական և մտավոր զարգացմանը:

Զեկուցագրի հեղինակները բացասական ցուցանիշների աճը բացատրում են պարենի գների աճի և համաշխարհային տնտեսական ճգնաժամով: Երեխաների թերասնումը կարելի է 1/3-ով կրճատել, եթե սննդով և բուժօգնությամբ ապահովվեն ոչ միայն երեխաները, այլև հղի կանայք և կրծքով կերակրող մայրերը:

Նիկոտինային կախվածության մեղավորը գեներն են

Ծխելու սովորությունը շատ բանով կախված է մարդու սոցիալական միջավայրից: Բայց ինչպե՞ս է, որ ոչ բոլորն են մոլի ծխողներ դառնում: Մինչև այժմ ընդունված էր այդ հարցում լարդին մեղադրել: Սակայն որոշ վերլուծություններից հետո գիտնականներն արդեն այլ կարծիք ունեն:

Հիմնվելով վիճակագրական տվյալների վրա՝ փորձագետները եզրակացրել են, որ թոքերի քաղցկեղից 10 մահերից 9-ը կապված է ծխելու հետ: Իսկ բացառություններ կազմող փաստերը, օրինակ, երբ 90-ամյա ծխողներն իրենց հիանալի են զգում, իսկ չծխող երիտասարդները հիվանդանում են թոքերի քաղցկեղով, գիտնականները հիմա բացատրում են գենային փոփոխություններով: Հետազոտությունները ցույց են տվել, որ թոքերի քաղցկեղով հիվանդանալու մեծ ռիսկ են առաջացնում 15-րդ քրոմոսոմի փոփոխությունները:

«Nature Genetikc» գիտական ամսագիրը հրապարակել է 3 հետազոտություններ, որոնցում գիտնականների միջազգային խումբը՝ Օքսֆորդի համալսարանի փորձագետների ղեկավարությամբ, պատմել է գենետիկական կարգագրի և ծխելու հակման միջև եղած կապի մասին: Ուսումնասիրելով 41 հազար մարդկանց տվյալները՝ գիտնականները հանգել են այն եզրակացության, որ 8-րդ և 19-րդ քրոմոսոմների մուտացիաներ ունեցող մարդիկ ծխախոտից կախվածություն ձեռք բերելու ավելի մեծ հակում ունեն և, սովորաբար, օրական ավելի շատ գլանակներ են ծխում՝ մեծացնելով թոքերի քաղցկեղի զարգացման ռիսկը: Բայց ավելի մռայլ է հնչում այն կանխատեսությունը, թե գեների այդպիսի մուտացիաներ ունեցող մարդկանց համար թոքերի քաղցկեղով հիվանդանալու ռիսկը մեծանում է նույնիսկ ավելի քիչ ծխելու դեպքում:



«Այս օրինաչափության բացահայտումը մեծացնում է ռիսկի խմբին պատկանող մարդկանց հայտնաբերելու և նրանց ծխախոտից հրաժարվելուն համոզելու մեր հնարավորությունները»,-գրում է Decode Genetics ընկերության գլխավոր տնօրեն Քերի Սթեֆանսոնը, ով ղեկավարել է այդ հետազոտություններից մեկը:

Լողավազանի քլորացված ջուրը քաղցկեղածին է

Իսպանացի գիտնականները հայտնաբերել են, որ լողավազանների քլորացված ջուրը կարող է հարուցել մարդու բջիջների ԴՆԹ-ի վնասվածք և հանգեցնել քաղցկեղի զարգացմանը:

Բարսելոնի Շրջակա միջավայրի համաճարակաբանության հետազոտությունների կենտրոնի և Դել Մար հիվանդանոցի աշխատակիցները հետազոտել են ջրի ախտահանման կողմնակի արգասիքների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա: Այդ արգասիքները գոյանում են ջրում նախապես առկա կամ լողորդի քրտինքի, մաշկի մասնիկների և մեզի հետ արտազատվող օրգանական նյութերի և քլորի ռեակցիայի դեպքում: Դրանցից գլխավորները տրիքլոմեթանի ածանցյալներն են:

Գիտափորձի ժամանակ 49 առողջ չափահաս կամավորներ լողավազանում մնացել են 40 րոպե: Դրանից հետո անցկացված տարրալուծումներից պարզվել է, որ ջրի ախտահանման կողմնակի արգասիքների հետ շփվելու հետևանքով ավելացել են միկրոմիջուկների քանակը լողորդների արյան լեմֆոցիտներում և մուտացիաների բիոմարկերների քանակը մեզի մեջ: Դրանք կապված են քաղցկեղի վտանգի մեծացման հետ:

Բացի դրանից, կամավորների արյան մեջ որոշակի է դարձել CC 16 սեկրետոգլոբինի պարունակության աճը: Դա վկայում է շնչուղիների վնասվածքի մասին:

Հետազոտության ղեկավարներից մեկը Ֆրանսպրեսին տված հարցազրույցում նշել է, որ անհրաժեշտ է վերանայել լողավազանների ախտահանման ստանդարտները: Աշխատանքի արդյունքները հրապարակված են Environmental Health Perspectives հանդեսում:

Գիրուրյուն

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 25.10.2010 թ.:

"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА